



**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

**DIRECTORY
OF INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

2021

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

**ВЕДОМОСТИ
ИНСТИТУТА ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

2021

**Yerevan 2022
Ереван 2022**

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ
2021

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2022

ՀՏԴ 81:030
ԳՄԴ 81+92
Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմողներ՝ Վ. Կատվալյան, Ն. Հովհաննիսյան, Գ. Մխիթարյան

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկա-
Հ 247 զիրք 2021.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2021.-
193 էջ:

Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2021 թ. ՀՀ ԳԱԱ
Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանք-
ները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակու-
թյունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար
գիտական հետազոտությունների ուղղությունների:

Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսվում է մասնագետնե-
րի, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության
համար:

ՀՏԴ 81:030
ԳՄԴ 81+92

ISBN 978-9939-9277-8-7

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

Երկու խոսք

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ ԳԱԱ կազմում հայերենագիտության ոլորտի գիտահետազոտական հաստատություն է, որը նաև կազմակերպում է հետբուհական կրթություն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը ընթանում է գիտական չորս ուղղություններով՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր: Ըստ այդմ՝ ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներն են հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտություններ ծավալելը, լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրներ արծարծելը և դրանց լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտական կադրեր պատրաստելը:

Իր գոյության շուրջ ութ տասնամյակների ընթացքում լեզվի ինստիտուտը գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դերակատարում ունեցել հայերենագիտության և ընդհանրապես լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետներին և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն: Ինստիտուտը ձգտում է նպաստել հասարակության լեզվամշակութի մակարդակը բարձրացնելուն, լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելուն, մայրենին պահպանելուն և տարածելուն, լեզվաքաղաքական խնդիրներ լուծելուն:

Հայոց լեզվի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություն է, իսկ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը երկրում հայերենի հե-

տագոտությամբ զբաղվող հիմնական հաստատությունն է: Այսօր էլ ինստիտուտի գիտական արդյունքները կարևոր ներդրում են հայերենագիտության մեջ, դրանք նաև կարևոր նյութ և աղբյուր են օտար հայագետների, հնդեվրոպաբանների համար:

Լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ՝ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ տրամադրելու նպատակով շարունակում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակումը: Շարքի երկրորդ հատորը ընդհանուր տեղեկություններ է ընդգրկում 2021 թվականին ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, ինչպես նաև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ: Տրվում է 2021 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն:

«Տեղեկագրքի» հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կծառայեն ապագայում ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար:

Կազմողներ

ՄԱՍ I

ՀՀ ԳԱՍ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2021 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2021թ. ընթացքում լեզվի ինստիտուտում նշանակալի արդյունքներ են ձեռք բերվել հայերենի բառարանագրության ուղղությամբ: Հրապարակվել են «Բայագետի բարբառի բառարան»-ը, «Նոր բառեր արեւմտահայերենի մեջ, Ա. գիրք»-ը, «Նոր բառեր»-ը, որոնք կոչված են բավարարելու իմացական և մշակութային որոշակի պահանջ, ուստի և կազմվել են ժամանակի թելադրանքով: Նոր բառարանները ներառել են ինչպես բարբառային բառեր ու դարձվածային միավորներ (7000 միավոր), այնպես էլ արևելահայ և արևմտահայ գեղարվեստական, գիտական գրականության մեջ և մամուլում գործածվող բառեր, որոնք արձանագրված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում քննվել են Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական համակարգում առկա գրաբարի, միջին հայերենի, զուտ բարբառային, փոխառությունների հիմքով կազմված բայեր և բայաձևեր, ինչպես նաև գրաբարում չվկայված, բարբառային շուրջ երեք տասնյակ բայեր, որոնք կազմվել են հնդեվրոպական արմատներով: Առանձնացվել և մեկնաբանվել են Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում վկայված բարբառային բառերն ու բառատարբերակները, առանձնացվել են գրաբարյան օրինաչափություններից շեղվող, բարբառային բառերն ու բառաձևերը, դիտարկվել է դրանց առնչությունը ժամանակի բարբառներին: Քննարկվել են թարգմանական գրականության մեջ լատիներենի ազդեցությունը, լատինաբան կազմությունները: Հետազոտությունների ար-

դյունքներն ամփոփվել են «Հայոց լեզվի պատմության հարցեր» ժողովածուում, հողվածներում և զեկուցումներում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են օտարալեզու եզրույթների հայերեն թարգմանության սկզբունքները: Մշակվել են արևմտահայերենի կանոնարկման սկզբունքները, հայերենագիտության մեջ առաջին անգամ հանգամանորեն ներկայացվել է վիճակագրական լեզվաբանության նորագույն փուլի ընդհանուր պատկերը:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում ըստ տարածական վերաբերության խմբավորվել են բարբառային հատկանիշները, դիտարկվել են հոգնակի թվի արտահայտության ձևերը բարբառային հայերենում, ուսումնասիրվել և նրկարագրվել են հյուսիսային Գողթնի միջբարբառը, Չմշկածագի խոսվածքը: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մենագրությամբ, հողվածներով և զեկուցումներով:

Բ. ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում շարունակվել է գրաբարի, միջին հայերենի բառապաշարի, ինչպես նաև լեզվի քերականական որոշ առանձնահատկությունների նկարագրական և համեմատական ուսումնասիրությունը. բացահայտվել են լեզվական հնագույն իրողություններ, լեզվաբանական ուսումնասիրության մեթոդների կիրառությամբ բնութագրվել են բառապաշարի թեմատիկ խմբերը հայերենի զարգացման տարբեր փուլերում: Ուսումնասիրվել են ձեռագիր բառարանները, հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները, համակողմանի քննվել է

միջնադարյան բժշկարանների մասնագիտական բառապաշարը: Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ տասնյակից ավելի հոդվածներում:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում ուսումնասիրվել է նեոֆունկցիոնալ հարացույցի մեջ ընդգրկվող երկու բնագավառ՝ ճանաչողական և հաղորդակցական, քննվել են թվային տեխնոլոգիաներին և լեզվի ուսումնասիրությանն առնչվող նորագույն ուղղությունները: Շարունակվել է հայ-արաբական և հայ-քարթվելական, հայ-գերմանական լեզվական առնչությունների ուսումնասիրությունը, կատարվել են ստուգաբանական բառարանների նյութի բառաքնական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ: Հետազոտությունների արդյունքներն արտացոլվել են երեք մենագրության մեջ և մեկ տասնյակից ավելի հոդվածներում:

Կիրառական լեզվաբանության բնագավառում քննվել են կիրառական և համակարգչային լեզվաբանության մի շարք խնդիրներ: Շարունակվել են համաբարբառների կազմության աշխատանքները և հետազոտությունները հայերենի փորձառական հրնչունաբանության բնագավառում:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում քննվել են բարբառագիտության պատմությանն առնչվող հարցեր (դիտարկվել են Գ.Սրվանձտյանի, Ղ.Ալիշանի՝ բարբառներին վերաբերող հայացքները), հետազոտվել է «Բուսանուններ» իմաստային խմբի բառաշերտը: Ուսումնասիրվել է Համշենի բարբառի՝ Գագրայի շրջանի խոսվածքների բառապաշարը: Պարզաբանվել են միջինհայերենյան իրողությունները Նախիջևանի տարածքի բարբառային միավորներում, արվել են ստուգաբանական դիտարկումներ, շարունակվել են բարբառային նյութը թվայնացնելու աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները հրապարակվել են հինգ մենագրություններում և մեկուկես տասնյակ հոդվածներում ու զեկուցումներում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում քննվել

են արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային առանձնահատկությունները, ճշգրտվել է դրանց նկարագրությունը: Դիտարկվել է արևմտահայերենի կանոնակարգման հարցը: Ուսումնասիրություններ (հիմնարդյունքներով) են կատարվել զուգադրական բառագիտության, արևմտահայերենի ձևաբանության ոլորտում: Ուշադրության են արժանացել արդի արևմտահայերենի գրական և խոսակցական տարբերակների առանձնահատկությունները, քննվել շարահյուսական մակարդակին վերաբերող հարցեր: Դիտարկվել են ընդհանուր լեզվաբանության մեջ 21-րդ դարում մշակված կառուցվածքային նորագույն մեթոդները:

Արդի արևելահայերենի ուսումնասիրության ոլորտում աշխատանքներ են իրականացվել բառարանների և բառացանկերի կազմության, շարահյուսական համակարգի ուսումնասիրության ուղղությամբ: Քննվել են արդի հայերենի բայակազմության և բայագործածության, տեքստի շարահյուսությանը վերաբերող հարցեր, բառագործածության շեղումներ:

Հետազոտություններ են կատարվել աշխարհաբարի բառակազմության պատմական հիմքերը բացահայտելու ուղղությամբ: Շարունակվել են ուսումնասիրությունները հայերենի բժշկագիտական (սիրտանոթային համակարգ) և հասարակական գիտությունների տերմինաբանության ոլորտում, դիտարկվել են «Հագուստ» թեմատիկ խմբի իմաստային առանձնահատկությունները:

Հրապարակվել է «Նոր բառեր»-ի Զ պրակը: Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երեք մենագրությամբ և մոտ երկու տասնյակ գիտական հոդվածներով:

Գ. ԹԵՄԱՏԻԿ ՖԻԼԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ» թեմայի շրջանակում մշակվել են հայերեն էլեկտրոնային սրբագրման նոր համակարգի կազմության սկզբունքները, արվել է ընդգրկվելիք

բառապաշարի ձևային նկարագրություն (շուրջ 200 000 գլխաբառ), կազմվել են թեքվող բառերի հոլովման և խոնարհման հարացույցները, մշակվել է համապատասխան ծրագրաշարը:

«Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում» թեմայի ուղղությամբ քննվել են օտար լեզուների ուսուցման սկզբունքները, լեզվի իմացության մակարդակների միջազգային չափանիշները, մշակվել և մշակվում են համապատասխան սկզբունքներ և չափանիշներ բազմալեզու միջավայրում հայերենի ուսուցման համար:

«Հայերենի բառապաշարի ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» թեմայի շրջանակում կատարվել է շուրջ 250 000 բառերի ձևային նկարագրություն (հիմնական և երկրորդական ձևայիններ՝ արմատ, ածանց, հոդակապ, աճական և այլն): Համալրվել է տվյալների շտեմարանը, թարմացվել համապատասխան ծրագրաշարը, վերջնական տեսքի բերվել համացանցային կայքը: Համակարգում ներդրվել է հայատառ ստեղծաշար, գուգահեռաբար մուտքագրվել են բառերի՝ դասական ուղղագրությամբ տարբերակները:

Դ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հրապարակվել են բարբառային և նորաբանությունների բառարաններ, գրական լեզվի կանոնարկման ու ուսուցման խնդիրներին առնչվող ձեռնարկներ: Ստեղծվել է հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ (այն գործում է համացանցային առանձին երկլեզու կայքում՝ [armspell.am](https://armspell.am/hy) (<https://armspell.am/hy>)), որը ուղղագրական և քերականական սխալները ստուգում է՝ շտեմարանում առկա բառերի հետ համեմատելով:

Ձևավորվել է հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարան՝ համացանցային առանձին երկլեզու կայքում ([formlang.am](https://formlang.am/hy) (<https://formlang.am/hy>)): Շտեմարանն ունի որոնման լայն հնարավորություն:

Հրատարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2021» գիրքը, որը ներկայացնում է 2021թ. ինստիտուտի աշխատակիցների հրապարակած աշխատանքների համառոտագրերը երեք լեզուներով և ընթերցողին հնարավորություն է ընձեռում անհրաժեշտ տեղեկություններ ստանալու ինստիտուտի աշխատանքների վերաբերյալ:

Ե. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆՆԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. «Լեզու և լեզվաբանություն», 1(24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, 104 էջ:
2. «Լեզու և լեզվաբանություն», 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 132 էջ:
3. Կատվալյան Վ.Լ., Բայազետի բարբառի բառարան, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 370 էջ:
4. Նոր բառեր, պրակ 2 (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սարգսյան Ն.Ս.), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 221 էջ:
5. «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 141 էջ:
6. Սարգսյան Մ.Ա., Լեզվաբանության տեսության հարցեր, Ե., «Տիր» հրատ., 2021, 204 էջ:
7. Սարգսյան Մ.Ա., Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ, Ե., «Տիր» հրատ., 2021, 128 էջ:
8. Վարդանյան Ա.Վ., Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 124 էջ:
9. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 228 էջ:

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ**

1. Լեզու և խոսք: Բազմալեզու գիտական հանդես, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 132 էջ: www.las.sci.am
2. Նոր բառեր արևմտահայերենի մէջ, Ա. գիրք, (Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան, Յ. Մարաշլեան), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 145 էջ:
3. Վ. Կատվայան, Հ. Խաչատրյան, Գ. Մկրտչյան, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Նյութեր. Պրակ Ա, Գեղարքունիք, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 207 էջ:
http://language.sci.am/sites/default/files/gegharkownik_prak_a.pdf
4. Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 171 էջ:
<http://language.sci.am/hy/armenian-online-conference>
5. Հայոց լեզվի պատմության հարցեր, IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 293 էջ:
http://language.sci.am/sites/default/files/hayots_lezvi_patmowtyan_hartser.pdf

ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. Գևորգյան Գ.Գ., Արևելահայերենի գործածության նորմեր և շեղումներ, Ե., «Զանգակ» հրատ., 2021, 240 էջ:
2. Գևորգյան Գ.Գ., Գործառական հայոց լեզու, Ե., «Զանգակ» հրատ., 2021, 248 էջ:

**ԳՐԱԽՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԳՐԱԽՈՍՎՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ
ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ**

1. Առաքելյան Կ.Լ., Փրկչի բնութագրիչները Խրիմյան Հայրիկի Խաչի ճառում, «Էջմիածին», Դ, 2021, էջ 126-134:
2. Առաքելյան Կ.Լ., Առած-ասացվածքների լեզվառճական առանձնահատկությունները Նշան Պեշիկթաշյանի երգիծավեպերում, «Բանբեր հայագիտության», Ե., «Գիտություն» հրատ., թիվ 3 (27), 2021, էջ 197-206:
3. Ասոյան Թ.Ա., Հայ բարբառագիտության նվիրյալը, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (217), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 318-323:
4. Ասոյան Թ.Ա., Հայերենի բարբառներին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 75-78:
5. Ասոյան Թ.Ա., Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցերը Ա.Այտընյանի «Քննական քերականութիւն արդի աշխարհաբար կամ հայերէն լեզուի» աշխատության մեջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 294-306:
6. Ասոյան Թ.Ա., Շարահյուսական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները միջին դպրոցում (համահեղինակությամբ Ի. Ասոյանի), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 261-274:
7. Ասոյան Թ.Ա., Բրազիլա Ն.Ա., Սովորողների մոտիվացիայի ձևավորումը բանավեճի մեթոդի միջոցով, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 387-396:
8. Ասոյան Թ.Ա., Վ. Կատվալյան. Հայաստանի բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3 (218), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 267-271:

9. Ասոյան Թ.Ա., Գալստյան Ա.Ս., Տիոյան Ս.Կ., Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 24-56:
10. Ավետյան Ս.Ռ., Անվանական հոլովման տիպաբանական զարգացումը հայերենում, «Հայագիտության հարցեր», № 1 (22), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 223-236:
11. Ավետյան Ս.Ռ., Հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորների ձևաբանական կարգավիճակը հին հայերենում, «Պատմաբանասիրական հանդես», № 1 (216), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 170-179:
12. Ավետյան Ս.Ռ., *Կու (կը)* մասնիկով կազմություններն արևելահայերենում (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), «Վեմ» համահայկական հանդես, թիվ 4 (76), Ե., «Վեմ հանդես» հրատ., 2021, էջ 140-155:
13. Ավետյան Ս.Ռ., Հրամայական եղանակը դասական հայերենում տիպաբանական և պատմական տեսանկյունից, ԲԵՀ, Բանասիրություն, հ. 3 (36), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 40-55:
14. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (համաձայնություն), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 355-362:
15. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (առդրություն, խնդրառություն), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 321-329:
16. Գալստյան Ա.Ս., Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 44-51:
17. Գալստյան Ա.Ս., Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 3-11:

18. Գևորգյան Գ.Գ., Ներկա-ապառնի ժամանակային անցումը հայերենում, «Հանդես ամսօրեայ», 1-12, Վիեննա, էջ 183-196:
19. Գրիգորյան Գ.Գ., Խոսակցական լեզվում *գալ, տալ, լալ* բայերի ձևերի ս-ի անկման պատճառների մասին, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 77-84:
20. Գրիգորյան Ս.Մ., Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության 2002-2020 թվականներին հրատարակված ուսումնասիրությունների մատենագիտական վերլուծություն, (ամփոփ նկարագրություն), «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 102-107:
21. Գրիգորյան Ս.Մ., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների իմաստային քննություն, «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 6-100:
22. Գրիգորյան Ս.Մ., Բաբգեն եպս. Կիլիկիեցու «Իսլամը հայ մատենագիտութեան մէջ» աշխատությունը և Գրիգոր Տաթևացու «Ընդդէմ տաճկաց-ը», «Հանդես ամսօրեայ», 1-12, Վիեննա, 2021, էջ 1-70:
23. Թադևոսյան Հ.Մ., Միջին հայերենին բնորոշ բառիմաստային նոր դրսևորումները «Գիրք վաստակոց» երկում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 100-147:
24. Թելյան Լ.Գ., Հայերենի տերմինային բառապաշարի զարգացման մի քանի հարցեր, ԲԵՀ, Բանասիրություն, հ. 1(34), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 27-33:
25. Թելյան Լ.Գ., Արդի հայերենի նորմը և հեռուստատեսության լեզուն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 52-61:
26. Թորոսյան Հ.Վ., *Շուն* բաղադրիչով դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 18-27:

27. Խաչատրյան Ա.Ս., Արևմտահայերենի նորակազմությունների բառակազմական որոշ առանձնահատկությունների մասին, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2(25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 44-53:
28. Խաչատրյան Հ.Ռ., Բարբառային իրողությունների տարածագործառական քննություն, մաս Բ, Հայաստանի Հանրապետության համապատկեր, նյութեր, պրակ Ա, Գեղարքունիք, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 124-167:
29. Խաչատրյան Հ.Ռ., Բառակազմական որոշ իրողություններ Համշենի բարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 29-42:
30. Խաչատրյան Հ.Ռ., Բառակազմական որոշ իրողություններ Համշենի բարբառում, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 29-42:
31. Խաչատրյան Վ.Մ., Ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարանների բառապաշարը, «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 148-198:
32. Խաչատրյան Վ.Մ., Հայոց լեզվի պատմության հարցեր, IV, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 293 էջ (գրախոսություն).-«Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 108-111:
33. Կատվայան Վ.Լ., Բարբառային հատկանիշների խմբավորման մի փորձ (ըստ տարածական ընդգրկման), «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 49-59:
34. Կատվայան Վ.Լ., Բարբառային միավորների ու իրողությունների համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, մաս Ա, Հայաստանի Հանրապետության համապատկեր, նյութեր, պրակ Ա, Գեղարքունիք, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 5-50:
35. Կատվայան Վ.Լ., Հայ բարբառների ուսումնասիրություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-143:

36. Կատվալյան Վ.Լ., Ալիշանի դերը հայ միջնադարեան բանաստեղծության բարբառային շերտի ուսումնասիրության մեջ, «Բազմավեպ», թիւ 1-2, Վենետիկ-Ս. Ղազար, 2021, էջ 274-280:
37. Կատվալյան Վ.Լ., Գ.Սրվանձտյանցը և բարբառային հայերենը, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 43-54:
38. Կատվալյան Վ.Լ., Հարությունյան Վ.Լ., Տնտեսագիտական տերմինաբանության զարգացման միտումների մասին, «Տնտեսագիտական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում (սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում – հատոր 2), Ե., ՀՀ ԳԱԱ ՏԻ հրատ., 2021, էջ 22-35:
39. Կատվալյան Վ.Լ., Հոգնակերտ մասնիկները բարբառային հայերենում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 281-297:
40. Հակոբյան Ֆ.Ա., Հայերենի ձևային նկարագրության խնդիրներ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 108-115:
41. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանություն, հայ. *հարկ*- < հե. *(H)a/ork/g-t-, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 60-69:
42. Համբարձումյան Վ.Գ., Գրիգորյան Գ.Գ., Ընդհանուր և համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 57-90:
43. Համբարձումյան Վ.Գ., Սահակ կաթողիկոս Ձորովորեցու երկերի բառապաշարը, «Էջմիածին», 2021 (ՀԸ) տարի, է, էջ 121-130:
44. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանական դիտարկումներ, «Լեզու և լեզվաբանություն» 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 27-43:
45. Համբարձումյան Վ.Գ., Բաղրամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Սեռանիշ ածանցների արտահայտությունը հայերենում, «Լեզու

- և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 68-76:
46. Հովհաննիսյան Լ.Շ., Վաստակաշատ գիտնականն ու ազնիվ քաղաքացին (Սեդա Գասպարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (217), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 300-307:
 47. Հովհաննիսյան Լ. Շ., *Բազայառիճ* տեղանվան շուրջ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 84-88:
 48. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանությունները, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 79-83:
 49. Հովհաննիսյան Ն.Գ., Դարձվածային միավորներ նույնանիշների՝ XVIII դ. ձեռագիր բառարաններում, «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողովի (Երևան, 8-9 հուլիսի) նյութեր/ ՀՀ լեզվի կոմիտե; ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա: Խմբ. խորհուրդ՝ Ս. Գրիգորյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ, Ե., Copy Print LLC հրատ., 2021, Պրակ Բ, էջ 75-85:
 50. Հովհաննիսյան Ն.Գ., Նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարանների կառուցվածքային առանձնահատկությունները, «Լեզու և խոսք», 1 (1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 55-75:
 51. Հովհաննիսյան Ն.Գ., Մխիթարյան Գ.Մ., Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 144-161:
 52. Ղամոյան Լ.Ա., Հոմանշությունը *հազուստ* իմաստաթեմատիկ խմբում, ԲԵՀ, հ. 2 (35), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 80-88:
 53. Ղամոյան Լ.Ա., Մենիմաստ բառերը «Հազուստ» իմաստային-թեմատիկ խմբում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 307-314:

54. Ղամոյան Լ.Ա., Բազմիմաստությունը «Հագուստ» իմաստային-թեմատիկ խմբում, «Լեզու և լեզվաբանություն» 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 85-92:
55. Մեսրոպյան Հ.Հ., Բուսանունները Հ. Ղեւոնդ Ալիշանի «Այրա-րատ-Բնաշխարհ Հայաստանեայց» աշխատության մեջ, Բազմավեպ, 1-2, Վենետիկ-Ս. Ղազար, 2021, էջ 123-135:
56. Mkhitarian G.M., A Cognitive Approach to the Study of Musical Terms, Proceedings of the Scholarly Abstracts, NXIX, p. 29, Publisher: "EASR", SciPub.de <https://ojs.scipub.de/index.php/EASR/issue/view/20/27>
57. Mkhitarian G.M., The Cognitive Feature of Musical Terms, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-95:
58. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության հարցերի քննությունը Ստեփանոս Պալասանյանի աշխատություններում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 261-274:
59. Ներսիսյան Վ.Ա., *Տնօրենություն* և *տնօրինություն* բառերի գործածությունը հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 89-99:
60. Պապիկյան Ս.Վ., Հատկական փոխառությունների քննություն, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 302-312:
61. Պապիկյան Ս.Վ., Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 346-354:
62. Սարգսյան Մ.Ա., Էլեկտրոնային սրբագրիչի տվյալների շտեմարանի բառապաշարի ձևային նկարագրության խնդիրների մասին, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, հ. 1(58), Ե., 2021, էջ 229-237:
63. Սարգսյան Մ. Ա., Գենդերային լեզվաբանությունը որպես լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն, «Գիտության աշխարհում», № 3, Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 2-9:

64. Սարգսյան Մ. Ա., Խաչիբաբյան Ն. Պ., «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 69-74:
65. Sargsyan M.A., On the Electronic Database of the Armenian Word-formation, "Kachar", 2, 2021, pp. 56-65.
<https://doi.org/10.52853/25792903-2021.2-msoe>
66. Sargsyan M.A., On the Problems of Teaching Armenian as a Second Language. In: Socio-cross-cultural Approach and Educational Technologies: Interdisciplinary Aspect: monograph. / Ed. By Gennady A. Ferapontov, Olga V. Mishutina. – Novosibirsk State Pedagogical University. – Novosibirsk: NSPU University Press, 2021. – Pp. 16-23:
67. Սաֆարյան Տ.Վ., Բառագործածական շեղումներ արդի հայերենում՝ կապված հնչյունական կազմի հետ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 324-332:
68. Սաֆարյան Տ.Վ. Բառիմաստի հետ կապված շեղումներն արդի հայերենում, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2(25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 93-101:
69. Սիրունյան Տ.Ղ., Քոնայի միարարական կենտրոնում ստեղծված երկրների բառապաշարը. նորաբանություններ և օտարաբանություններ (ԺԴ. դ.), «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 199-291:
70. Սուքիասյան Հ.Վ., Զաքարյան Հ.Լ., Հայերեն բժշկագիտական եզրույթների ինքնատիպության խնդրի շուրջ, «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողովի (Երևան, 8-9 հուլիսի) նյութեր / ՀՀ լեզվի կոմիտե; ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա: Խմբ. խորհուրդ՝ Ս. Գրիգորյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ, Ե., Copy Print LLC հրատ., 2021, Պրակ Բ, 151-163:
71. Վարդանյան Ա.Վ., *Շուշի* տեղանվան ստուգաբանությունը, «Հանդես ամսօրեայ», 1-12, 2021, Վիեննա, էջ 479-484:

72. Վարդանյան Ա.Վ., Միջինհայերենյան իրողություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 100-107:
73. Варданян А.В., Этимология этнонима "зок", «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 96-106:
74. Տիոյան Ս.Կ., Նորամուտ օտար բառերի սխալ գործածությունների մասին (ինտեգրացիա, ասոցիացիա, մոտիվացիա), «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 54-62:
75. Ֆիշենկճյան Ա.Ա., *Թեք* վերջնաբաղադրիչով բառեր հայերենի մեջ, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 63-67:

**Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի
ժողովածուում (Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 173 էջ)
հրապարակված հոդվածներ**

http://language.sci.am/sites/default/files/hayerenahitayan_arhtsants_gita_zhoghovi_nyowter.pdf

1. Բառնասյան Ջ.Ա., Լեզվամտածողության առանձնահատկությունների քննություն՝ ըստ Շիրակի մարզի գյուղերի խոսվածքների գրառումների, էջ 3-9:
2. Գրիգորյան Գ.Գ., Ականավոր հնչյունաբաններ (տեղեկատվական հոդված), էջ 8-27:
3. Գրիգորյան Ս.Մ., Գրիգոր Տաթևացու «Գիրք Քարոզութեան» Ամառան և Ձմեռան հատորների բառապաշարի ձևախմբատային խմբերն իբրև ինքնատիպ լեզվամտածողության արտահայտություն, էջ 28-45:
4. Թադևոսյան Հ.Մ., «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» երկի բառապաշարի ընդհանուր բնութագիրը, էջ 89-106:
5. Խաչատրյան Հ.Ռ., *Լուսամուտ* և *պատշգամբ* հասկացությունների բառանունները բարբառային հայերենում, էջ 107-122:

6. Ներսիսյան Վ.Ա., Բայի եղանակաժամանակային ձևերի գործածությունը Հովհաննես Օձնեցու երկերում, էջ 122-136:
7. Սարգսյան Ն.Մ., Արդի հայերենի նորագույն հապավումները, էջ 136-143:
8. Վարդանյան Ա.Վ., Արցախի բարբառի «տնջրի» բուսանվան ստուգաբանությունը, էջ 144-150:
9. Տիոյան Ս.Կ., Բառապաշարի զուգադիր քննություն. հոմանիշ բառերը գրական հայերենում, էջ 151-170:

**«Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածուում (Ե., «Տիր» հրատ., 2021, 256 էջ)
հրապարակված հոդվածներ**

http://language.sci.am/sites/default/files/book/lezvi_owsowtsm_khn.pdf

1. Թորոսյան Հ.Վ., Հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները (պարսկախոս լսարանի օրինակով), էջ 51-58:
2. Համբարձումյան Վ.Գ., Հին լեզուների դասավանդման կարևորությունը նոր լեզուների ճիշտ ուսուցման մեջ, էջ 85-89:
3. Մեսրոպյան Հ.Հ., Հայերենը որպես միջնորդ լեզու և փոխըմբռնման միջոց համաշխարհայնացման արդի դարաշրջանում, էջ 90-100:
4. Միքայելյան Ս.Ա., Օտար լեզուների արդի ուսուցման հայեցակարգի շուրջ, 18-27:
5. Սարգսյան Մ.Ա., Հայերենի իմացության մակարդակների առանձնացում ըստ միջազգային չափանիշների, էջ 6-17:
6. Քիլերճյան Բ.Մ., Արեւմտահայերենի լեզուի ուսուցման գործընթացը հիբրիդային ուսուցման ձեւաչափով, 138-147:

ՄԱՍ II

ՀՀ ԳԱՍ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2021 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2021 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

- Նոր բառեր, պրակ Զ (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սարգսյան Ն.Մ.), Ե., ՀՀ ԳԱՍ ԼԻ հրատ., 2021, 221 էջ:
- Նոր բառեր արևմտահայերենի մէջ, Ա. գիրք, (Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան, Յ. Մարաշլեան), Ե., ՀՀ ԳԱՍ ԼԻ հրատ., 2021, 145 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Փրկչի բնութագրիչները Խրիմյան Հայրիկի Խաչի ճառում, «Էջմիածին», Դ, 2021, էջ 126-134:
2. Առաքելյան Կ.Լ., Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները Նշան Պեշկեթաշյանի երգիծավեպերում, «Բանբեր հայագիտության», Ե., «Գիտություն» հրատ., թիվ 3 (27), 2021, էջ 197-206:

3. Ասոյան Թ.Ա., Հայ բարբառագիտության նվիրյալը, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (217), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 318-323:
4. Ասոյան Թ.Ա., Հայերենի բարբառներին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 75-78:
5. Ասոյան Թ.Ա., Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցերը Ա.Այտընյանի «Քննական քերականութիւն արդի աշխարհաբար կամ հայերէն լեզուի» աշխատության մեջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 294-306:
6. Ասոյան Թ.Ա., Շարահյուսական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները միջին դպրոցում (համահեղինակությամբ Ի. Ասոյանի), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 261-274:
7. Ասոյան Թ.Ա., Վ.Կատվալյան. Հայաստանի բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3 (218), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 267-271:
8. Ասոյան Թ.Ա., Գալստյան Ա.Ս., Տիոյան Ս.Կ., Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 24-56:
9. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (համաձայնություն), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 355-362:
10. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (առդրություն, խնդրառություն), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 321-329:

11. Գալստյան Ա.Ս., Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 44-51:
12. Գալստյան Ա.Ս., Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 3-11:
13. Թելյան Լ.Գ., Հայերենի տերմինային բառապաշարի զարգացման մի քանի հարցեր, ԲԵՀ, Բանասիրություն, հ. 1(34), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 27-33:
14. Թելյան Լ.Գ., Արդի հայերենի նորմը և հեռուստատեսության լեզուն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 52-61:
15. Խաչատրյան Ա.Ս., Արևմտահայերենի նորակազմությունների բառակազմական որոշ առանձնահատկությունների մասին, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2(25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 44-53:
16. Ղամոյան Լ.Ա., Հոմանշությունը *հազուստ* իմաստաթեմատիկ խմբում, ԲԵՀ, հ. 2 (35), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 80-88:
17. Ղամոյան Լ.Ա., Մենիմաստ բառերը «Հազուստ» իմաստային-թեմատիկ խմբում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 307-314:
18. Ղամոյան Լ.Ա., Բազմիմաստությունը «Հազուստ» իմաստային-թեմատիկ խմբում, «Լեզու և լեզվաբանություն» 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 85-92:
19. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության հարցերի քննությունը Ստեփանոս Պալասանյանի աշխատություններում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 261-274:
20. Ներսիսյան Վ.Ա., *Տնօրենություն* և *տնօրինություն* բառերի գործածությունը հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 89-99:

21. Ներսիսյան Վ.Ա., Բայի եղանակաժամանակային ձևերի գործածությունը Հովհաննես Օձնեցու երկերում, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 122-136:
22. Սարգսյան Ն.Ս., Արդի հայերենի նորագույն հապավումները, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 136-143:
23. Տիոյան Ս.Կ., Բառապաշարի զուգադիր քննություն. հոմանիշ բառերը գրական հայերենում, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 151-170:
24. Պապիկյան Ս.Վ., Հատկական փոխառությունների քննություն, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 302-312:
25. Պապիկյան Ս.Վ., Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 346-354:
26. Սարգսյան Ն.Ս., Արդի հայերենի նորագույն հապավումները, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 136-143:
27. Սաֆարյան Տ.Վ., Բառագործածական շեղումներ արդի հայերենում՝ կապված հնչյունական կազմի հետ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 10, Ե., «Արտագերս» հրատ., 2021, էջ 324-332:
28. Սաֆարյան Տ.Վ., Բառիմաստի հետ կապված շեղումներն արդի հայերենում, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 93-101:
29. Սուքիասյան Հ.Վ., Զաքարյան Հ.Լ., Հայերեն բժշկագիտական եզրույթների ինքնատիպության խնդրի շուրջ, «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողովի (Երևան, 8-9 հուլիսի) նյութեր / ՀՀ լեզվի կոմիտե; ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա:

- Խմբ. խորհուրդ՝ Ս. Գրիգորյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ, Ե., Copy Print LLC հրատ., 2021, Պրակ Բ, 151-163:
30. Տիոյան Ս.Կ., Նորամուտ օտար բառերի սխալ գործածությունների մասին (ինտեգրացիա, ասոցիացիա, մոտիվացիա), «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 54-62:
31. Քիլերճյան Բ.Մ., Արեւմտահայերէնի լեզուի ուսուցման գործընթացը հիբրիդային ուսուցման ձեւաչափով, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021, էջ 138-147:
32. Ֆիշենկճյան Ա.Ա., *Թեք* վերջնաբաղադրիչով բառեր հայերէնի մէջ, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 63-67:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Առաքելյան Կ., Առած-ասացվածքների լեզվառձական առանձնահատկությունները Նշան Պեշկյաշյանի երգիծավեպերում (հոդված)

Հոդվածագիրը հանգամանորեն անդրադառնում է սփյուռքահայ նշանավոր գրող, երգիծաբան Նշան Պեշկյաշյանի երգիծավեպերում առած-ասացվածքների գործածության առանձնահատկություններին՝ նշելով, որ երբեմն գրողն առածը կամ ասացվածքը կիրառում է որպես բնաբան կամ արտահայտած մտքերի եզրակացություն: Երբեմն դրանք օգտագործում է նույնությամբ, երբեմն կիրառում դրանց տարբերակները, երբեմն էլ ինքն է ստեղծում տարբերակներ: Առանձին անդրադարձ կա այն առած-ասացվածքներին, որոնք հեղինակային նորակազմություններ են:

Հողվածում քննվում են առած-ասացվածքներում առկա պատկերավորման միջոցները՝ փոխաբերությունները, չափազանցությունները, դիմաոնությունները, համեմատությունները և այլն: Ըստ հողվածագրի՝ խոսքը ոճավորելու նպատակով Պեշիկթաշլյանը կիրառում է դարձվածների դիպվածային տարբերակներ, գործածում է նաև աստվածաշնչյան արտահայտություններ, որոնք դարերի ընթացքում ձեռք են բերել ասացվածքի արժեք և օգտագործվել խոսքային միանգամայն տարբեր իրադրություններում, նաև այնպիսի դեպքերում, որոնք շատ հեռու են նախնական իմաստից: Երգիծավեպերում առկա են երգիծական բնույթի իմաստասիրական խորհրդածություններ, որոնք կազմված են առած-ասացվածքների սկզբունքով:

Հողվածագիրը եզրակացնում է, որ այս միավորները նպաստել են ասելիքի արտահայտչականությանը, խոսքի ոճավորմանը, պատկերավորությանը:

Առաքելյան Կ., Փրկչի բնութագրիչները Խրիմյան Հայրիկի Խաչի ճառում (հողված)

Հողվածագիրը ներկայացնում է Խրիմյան Հայրիկի ստեղծագործություններից մեկը՝ հայ հոգևոր գրականության գոհարներից «Յիսուսի վերջին շաբաթ Խաչի ճառ եւ կորուսելոյ յիմարութիւն»-ը, որը վերաբերում է Հիսուսի երկրային կյանքի վերջին շաբաթվա իրադարձություններին: Հողվածում նշվում է, որ ճառը գրված է յուրօրինակ ոճով՝ ավելի մարդ-Աստված կամ հեղինակ-Փրկիչ զրույցի ձևով. հեղինակն իր հիացմունքն ու երախտագիտությունն է հայտնում Փրկչին՝ Նրան տալով նաև զանազան անուններ:

«Խաչի ճառ»-ում Քրիստոսին տրված անունների մեծ մասը սերտորեն առնչվում է Աստվածաշնչին: Հողվածում այդ անունները պայմանականորեն բաժանվում են մի քանի խմբերի. անուններ՝ արտահայտված թանձրացական, վերացական գոյականներով և ածականներով, որոնք գործածվում են փոխանվանաբար, և որոնք ունեն բազմաթիվ հետաքրքիր բնութագրիչներ՝ մակդիրներ:

Կան անուններ, նաև անուն-արտահայտություններ, որոնք ընդգծում են Քրիստոսի պատարագվելու գաղափարը, մատնանշում Քրիստոս Աստծու հոգրությունը, արտահայտում Քրիստոսի՝ Եկեղեցու գլուխ լինելու գաղափարը, ընդգծում են Հիսուսի բացարձակ ճշմարտություն, աստվածային խորախորհուրդ և առաջատես իմաստություն լինելը:

Հոգվածագիրը եզրակացնում է, որ «Խաչի ճառ»-ում Քրիստոսին բնութագրող բազմաթիվ անուններ ծառայում են միևնույն նպատակին՝ Փրկչի դիմանկարն ամբողջացնելուն: Ամեն մի անուն հիմնականում մատնանշում է Հիսուսին բնորոշ որևէ հատկանիշ, Նրա երկրային կյանքին առնչվող որևէ դրվագ, որոնք խիստ կանոն են փրկչական առաքելության համատեքստում:

**Ասոյան Թ., Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության
հարցերը Ա.Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար
կամ արդի հայերեն լեզուի» աշխատության մեջ (հոդված)**

Հոգվածագիրը քննում է Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերից մեկի՝ Ա.Այտընյանի՝ հայերենի պատմական զարգացմանը, լեզվաորակներին, սրանց փոխհարաբերություններին վերաբերող ըմբռնումներն ու մեկնաբանությունները՝ 19-րդ դարի արևմտահայերենի վիճակի հաշվառմամբ: Հոգվածում նախ նշվում է, որ նոր գրական հայերենի զարգացման ընթացքը շատ կողմերով պայմանավորվել է պատմական, հասարակական-քաղաքական իրավիճակով, մտավորականության, մշակութային գործիչների կողմնորոշումներով, և որ արևմտահայերենի՝ որպես նոր գրական հայերենի ձևավորման, զարգացման և կանոնարկման խնդիրներն ուսումնասիրել են Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները: Հոգվածում ներկայացվում են Ա.Այտընյանի հայացքները հայերենի պատմական զարգացման ու փոփոխությունների, հին ու նոր գրական լեզուների, նրանց լեզվական առանձնահատկությունների և կիրառության հասարակական ու

անձնական ընկալումների վերաբերյալ, նաև լեզվաբանի անկողմնակալ մոտեցումը արևմտահայ մտավորականությանը հուզող կարևորագույն հարցերին:

Հոդվածագրի կարծիքով՝ Ա. Այտընյանի «Քննական քերականություն»-ը հարցերի ընդգրկման, դրանց անկողմնակալ մեկնաբանման տեսանկյունից կարելի է գնահատել որպես խիստ արժեքավոր ներդրում հայերենագիտության մեջ, որն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը:

Ասոյան Թ., Ասոյան Ի., Շարահյուսական գիտելիքների ուսուցման հարցերը միջին դասարաններում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են շարահյուսական գիտելիքները համակարգված, համակողմանի մատուցելու և ուսուցման արդյունավետությունն ապահովելու գործընթացի առանձնահատկությունները: Նշվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցման արդյունավետության խնդիրները միշտ պետք է լինեն պետության ուշադրության կենտրոնում: Հասարակական առաջընթացը մարդու կենսագործունեության բոլոր բնագավառներում պահանջում է նոր վերաբերմունք և մոտեցում կրթական ոլորտի նկատմամբ, ուսուցման նոր ծրագրեր, տեխնոլոգիաներ ու մոդելներ: ՀՀ-ում ուսուցման լեզուն հայերենն է, հետևաբար լրջագույն ուշադրություն է անհրաժեշտ հայոց լեզվի դասավանդման հարցերին՝ գիտակցելով, որ մյուս առարկաների ծրագրային նյութերը յուրացնելու հիմքը հայոց լեզվի իմացությունն է: Նկատի ունենալով վերը նշվածը՝ հոդվածում քննվում են հայոց լեզվի ուսուցմանն առնչվող որոշ հարցեր՝ նպատակ ունենալով ցուցադրել դրա առանձնահատկությունները: Մասնավորապես շարահյուսական գիտելիքների ուսուցումը պետք է զուգակցել լեզվի կառուցվածքային մյուս բաղադրիչների հետ, ապահովել գիտելիքների գիտականությունը, համակարգայնությունը, համակողմանիությունը, մատչելիությունը և պայմանավորել նրանով, որ շարահյու-

սական ուսումնասիրության կենտրոնում նախադասությունն է, առանց որի հնարավոր չէ մտքեր արտահայտել և հաղորդակցվել:

Այսպիսով՝ հողվածում մանրամասնորեն ներկայացվում են ուսուցման այն հիմնական ուղիները, որոնք կնպաստեն շարահյուսական գիտելիքներն արդյունավետ յուրացնելուն:

**Ասոյան Թ., Բրազինա Ն., Սովորողների մոտիվացիայի
ձևավորումը բանավեճի մեթոդի միջոցով (հողված)**

Հողվածում ներկայացվում են տարրական դասարաններում մայրենիի ուսուցման ընթացքում բանավեճի մեթոդը կիրառելու փորձարարական արդյունքները: Մշակվել է քայլային հաջորդականություն, որը փորձարկվել է Գագարինի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանում: Հիմնական նպատակը ստուգելն էր, թե տվյալ մեթոդը կիրառելը որքանով է նպաստում սովորողների նպատակամղումը (մոտիվացիան) ձևավորելուն: Արդյունքը հնարավորություն է ընձեռում հավաստելու, որ բանավեճի մեթոդն օգնում է ձևավորելու և զարգացնելու սովորողների նպատակամղումը: Մեթոդի կիրառությունը սովորողների ստեղծագործ ներուժը բացահայտելու և վերլուծական միտք ձևավորելու նախադրյալներ է ստեղծում: Հարկ է նշել, որ բանավեճի մեթոդը ժամանակատար է և ենթադրում է և՛ ուսուցչի, և՛ սովորողների որոշակի նախապատրաստական աշխատանք:

Հողվածում արձանագրվում է, որ մեթոդը նպաստում է նպատակամղումը կայուն զարգացնելուն: Այն մարզում է միտքը և զարգացնում նաև բանավոր խոսքը, ստեղծում հաղորդակցման հմտությունների բազմամակարդակ ընկալում:

**Բարսեղյան Ա., Շարահյուսական կապակցության եղանակների
դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (համաձայնություն)
(հոդված)**

Հոդվածում ներկայացվում և քննվում են Ա. Բակունցի երկերի լեզվում առկա ենթակայի և ստորոգյալի համաձայնության դեպքերը, որոնք հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին:

Ըստ հոդվածագրի՝ համաձայնության կապակցության եղանակը դրսևորում է յուրահատկություններ՝ պայմանավորված ենթակայի ու ստորոգյալի արտահայտության միջոցների իմաստային հատկություններով:

**Բարսեղյան Ա., Շարահյուսական կապակցության եղանակների
դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում (առդրություն,
խնդրառություն) (հոդված)**

Հոդվածագիրը, քննելով շարահյուսական կապակցման եղանակներ առդրությունը և խնդրառությունը Ակսել Բակունցի երկերի լեզվում, հանգում է այն եզրակացության, որ Բակունցի երկերի լեզվին հատուկ են հետադաս որոշիչներով և հատկացուցիչներով առդրությունները, խնդրառության դրսևորումները պայմանավորվում են բարբառի և խոսակցական լեզվի ազդեցությամբ:

**Գալստյան Ա., Նորակազմ բառերը արդի հայերենի
բառապաշարում (հոդված)**

Հոդվածում դիտարկվում են ժամանակակից հայոց լեզվում նոր բառերի ստեղծման և գործածության առանձնահատկությունները, հայերենագիտության մեջ նորակազմությունների մասին արտահայտված կարծիքները:

Հոդվածագիրն ուսումնասիրում է գործածվող տերմինները, քննում է մի շարք ածանցների, ածանցակերպների և բառակազմական որոշ կաղապարների գործուն դառնալը: Ընդհանուր գծե-

րով ներկայացվում են գոյականներից և ածականներից կազմված նորակերտ բայերը, ինչպես նաև հարադիր կազմություններից և համագործածական բառապաշարի բայերից մի շարք կաղապարներով՝ տարբեր ածանցների և արմատների համակցությամբ ստեղծված նորակերտ բայերը:

Գալստյան Ա., Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր (հոդված)

Հոդվածում ներկայացվում է լեզվի մեջ նոր բառերի ստեղծման արտալեզվական և ներհամակարգային գործընթացը: Նշվում է, որ հասկացության լեզվական արտահայտման անհրաժեշտությանը լեզուն արձագանքում է նախ և առաջ մասնագիտական բառաստեղծումների կիրառմամբ, տարբերակներն ընտրվում են լեզվի ներհամակարգային զարգացումների ընթացքում, որը հոդվածագիրը դիտարկում է մի շարք հասկացություններ արտահայտող (*օդորակիչ, ներգատաբան, հոգեկերտվածք*) նորակազմ բառերի տարբերակների համագործակցության և լեզվական համակարգում դրանցից որևէ մեկի (կամ մի քանիսի) ամրակայման օրինակով: Քննվում է նաև գունանվանումների թեմատիկ խումբ նշանակող նորաստեղծ բառերի ներքին ձևը:

Թելյան Լ., Հայերենի տերմինային բառապաշարի զարգացման մի քանի հարցեր (հոդված)

Հոդվածում ներկայացվում է, որ հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում նրա բառային կազմը, ներառյալ տերմինային բառապաշարը, շարունակաբար համալրվում է նոր միավորներով առաջին հերթին իր բառակազմական հարուստ հնարավորությունների շնորհիվ, ըստ հարկի՝ նաև փոխառությունների միջոցով: Մրանց համամասնությունը կարգավորում է լեզվական համակարգը, և այս հանգամանքը հոդվածում հիմնավորվում է արդի

հայերենի տերմինային բառապաշարի կոնկրետ օրինակներով: Ընդամին կարևորվում է նաև մասնագետ լեզվաբանների, լեզվաքաղաքականություն իրականացնող պետական և հասարակական մարմինների գործունեությունը հատկապես տերմինաշինության ու տերմինագործածության բնագավառներում: Ըստ այսմ՝ հոդվածագիրն անդրադարձել է «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում 1969-1971թթ. ծավալված՝ հայերենի տերմինաբանության հարցերին նվիրված բանավիճային քննարկմանը, որին մասնակցել են մեր նշանավոր լեզվաբանները: Ներկայացվում են նաև ԳԱԱ լեզվի ինստիտուտի համապատասխան բաժինների, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի, Լեզվի պետական տեսչության ձեռնարկումներն ու հրապարակումները՝ ուղղված արդի հայերենի տերմինաբանության և ընդհանրապես բառապաշարի զարգացման ու կանոնարկման խնդիրներին: Հոդվածի հեղինակը կարևորում է նաև 1993-ին Ֆրանսիայում հիմնադրված «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի» գործունեությունն ու նրա հրատարակած տերմինաբանական երեք ուղեցույցները, որոնք մասնագիտական պատշաճ ուշադրության պարագայում կարող են որոշակիորեն նպաստել նաև արևելահայերենի տերմինաբանության զարգացմանը:

Թելյան Լ., Արդի հայերենի նորմը և հեռուստատեսության լեզուն
(հոդված)

Զանգվածային լրատվության ամենից ներգործուն միջոցներից մեկի՝ հեռուստատեսության լեզվական որակը կարող է պատկերացում տալ հանրության տվյալ շրջանի լեզվական մշակույթի մասին ընդհանրապես, և դրանով էլ, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, կարևորվում են հեռուստահաղորդումների լեզվի մասնագիտական դիտարկումն ու գնահատումը արդի հայերենի նորմի դիրքերից: Հոդվածում բավական հարուստ փաստական նյութի հիման վրա ներկայացված են հիմնականում հեռուստահաղորդավարների և հանրային գործիչների խոսքում հեղինակի ար-

ձանագրած լեզվական խաթարումներն ու շեղումները՝ անհրաժեշտ մասնագիտական մեկնաբանությամբ ու գնահատականներով: Ուշադրության առարկա են հատկապես երկու ոլորտների՝ բառագործածության և խոսքի կառուցման առավել հաճախադեպ սխալներն ու շեղումները: Մատնանշվում են նաև դրանց պատճառները՝ բառիմաստի ոչ ճիշտ ընկալում, համանուն կամ հարանուն բառերի իմաստների շփոթում, բառի սխալ կազմություն, ոճական անհամապատասխանություն համատեքստին, խոսքի կառուցման տրամաբանական և քերականական կանոնների խախտումներ, օտար լեզվամտածողության ազդեցություն և այլն: Հետաքրքրություն են ներկայացնում նաև լեզվական նորմի շրջանակներում դիտարկվող որոշակի տեղաշարժերի արձանագրումները:

**Խաչատրյան Ա., Արևմտահայերենի նորակազմությունների
բառակազմական որոշ առանձնահատկությունների մասին
(հոդված)**

Հոդվածագիրն անդրադառնում է արևմտահայ մամուլում («Հորիզոն», «Հայրենիք», «Նոր Հառաջ») առկա նորաբանությունների բաղադրիչների՝ ձևաբանական և շարահյուսական մի շարք փոխհարաբերությունների: Նշվում է, որ այն դեպքում, երբ բարդության բաղադրող հիմքը արտահայտվում է բայարմատով կամ բայահիմքով, վերջինս գարիշխող դիրք ունի բարդության առաջին բաղադրիչի նկատմամբ: Նման բարդությունները բառակապակցությունների վերածելիս առաջին բաղադրիչը ստանում է տարբեր հոլովական իմաստներ: Հոդվածում նշվում է նաև, որ անվանական խոսքի մաս (գոյական, ածական, դերանուն) + բայարմատ (բայահիմք) կաղապարով կազմված բարդությունները շարահյուսական կապակցության վերածելիս կարող են արտահայտել խնդրային և պարագայական հարաբերություններ:

Ըստ հողվածագրի՝ բառերի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել նաև, որ բայական գերադաս բաղադրիչներով բարդ բառերն առանձնապես արդյունավետ չեն գոյականներ կազմելիս, քանի որ այդպիսի կառուցվածք ունեցող բարդ բառերի մեծ մասն րտահայտում է հատկանշային հարաբերություն:

Նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում գործում են բառակազմական գրեթե նույն սկզբունքները:

Ղամոյան Լ., Հոմանշությունը «Հագուստ» իմաստաթեմատիկ խմբում (հողված)

Ուսումնասիրելով *հագուստ* իմաստային (թեմատիկ) խմբի հոմանիշ բառերը՝ հողվածագիրը տարբերակում է նույնանիշ և համանիշ բառերը (իբրև առանձին իրողություններ)՝ հաշվի առնելով դրանց ծագումը, խոսքիմասային պատկանելությունը, բառակազմությունը և այլն: Ըստ այդմ՝ նա հանգել է այն եզրակացության, որ *հագուստ* հասկացություն նշող համանիշները նույնանիշներից տարբերվում են ոչ միայն իմաստային առումով, այլև հոմանշային շարքի բաղադրիչների միջև դրսևորվող իմաստային կապերով ու հարաբերություններով, իմաստային տարբեր աստիճանավորումներով, ոճական-արտահայտչական գործառույթներով և այլ հատկանիշներով:

Ղամոյան Լ., Բազմիմաստությունը «Հագուստ» իմաստային-թեմատիկ խմբում(հողված)

Հագուստ իմաստային (թեմատիկ) խմբի բազմիմաստ բառերը հողվածում դասակարգվում են ըստ բառիմաստների քանակի (երկիմաստ, եռիմաստ, քառիմաստ և այլն), ըստ խոսքիմասային պատկանելության և ըստ բառակազմական կաղապարների: Քննվում են այդ բառերի գլխավոր և երկրորդական (նաև փո-

խաբերական) իմաստների փոխհարաբերությունները, պատմական զարգացումը: Ուշադրության են արժանացել ինչպես բազմիմաստ նորակազմությունները, այնպես էլ *հազուստ* իմաստային (թեմատիկ) խմբի բառերից կազմված բազմիմաստ դարձվածային միավորները:

Ղամոյան Լ., Մենիմաստ բառերը «Հազուստ» իմաստային-թեմատիկ խմբում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ *հազուստ* իմաստային (թեմատիկ) խմբի *մենիմաստ* բառերը սակավաթիվ չեն: Առանձնացվում են կազմությամբ *պարզ, բարդ* և *ածանցավոր* մենիմաստ բառերը, ներկայացվում այդ բառերից կազմված մենիմաստ դարձվածային միավորներն ու նորակազմությունները:

Հոդվածագիրը նկատում է, որ բառիմաստային փոփոխությունների ընթացքում բազմաթիվ մենիմաստ բառեր կարող են իմաստապես ճյուղավորվել ու բազմիմաստ դառնալ, և հակառակը:

Ներսիսյան Վ., Տնօրենություն և տնօրինություն բառերի գործածությունը հայերենում (հոդված)

Հոդվածագրի նպատակն է քննել *տնօրեն* գոյականից բաղադրված և ժամանակակից հայերենում լայնորեն գործածվող *տնօրենություն* և *տնօրինություն* բառերը, որոնք կազմությամբ նույնն են և գուտ ձևային առումով տարբերվում են նրանով, որ առաջինը հնչյունափոխված է, երկրորդը՝ ոչ: Նշվում է, որ հայերենում, որպես կանոն, բաղադրական հիմքերի տարբերակներով են հանդես գալիս հիմնականում գործածական հաճախականություն ունեցող բառերը:

Ըստ հեղինակի՝ խնդրո առարկա բառերի դեպքում տարակարծությունները պայմանավորված են միայն մեկ՝ «դեկլավարություն» իմաստով գործածությամբ, որը փոխարինում է խորհրդա-

յին տարիներին լայնորեն տարածված *ղիրեկցիա* բառին: Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու բառերի գործածությունը հայերենի պատմական զարգացման ընթացքում առհասարակ՝ նկատի ունենալով, որ լեզվում բառերի ճնշող մեծամասնությունը բազմիմաստ է, և բառի իմաստային առանձնահատկությունները քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել դա: Հեղինակը ցույց է տվել նախ *տնօրեն*, ապա նրանից բաղադրված՝ *տնօրենություն* և *տնօրինություն* բառերի գործածությունը՝ ըստ հայերենի բառապաշարը ընդգրկող բառարանների:

Հոդվածում ներկայացվում են Արևելահայերենի ազգային կորպուսի տվյալները՝ պարզելու երկու տարբերակներում բառերի գործածության հաճախականությունը:

Հոդվածի վերջում տրվում են եզրահանգումները, և հեղինակը եզրակացնում է, որ *տնօրինություն* բառը «դեկլարություն» իմաստով գործածելը ոչ միայն սխալ չէ, այլև ավելի նպատակահարմար է: Պետք չէ հակադրել վերոհիշյալ երկու ձևերը և արհեստական միջատություններով ազդել լեզվի բնականոն զարգացման վրա:

Ներսիսյան Վ., Բառակազմության հարցերի քննությունը Ստեփանոս Պալասանյանի աշխատություններում (հոդված)

Հոդվածագիրը ներկայացնում է աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման նախադրյալներն ու հիմքերը՝ մասնավորապես քննելով բառակազմության հարցերի արտացոլումը նշանավոր հայագետ Ստեփանոս Պալասանյանի (1837-1889) աշխատություններում:

Նշվում է, որ Ստ. Պալասանյանը, «Քերականութիւն մայրենի լեզուի» աշխատության 2-րդ մասում բնութագրելով հնչյունը, վանկը և բառը, ներկայացնում է նաև բառերի կազմությունը և նշանակությունը, համառոտ անդրադառնում ածանցավոր բառերի կազմության մի քանի օրինաչափության: Բառակազմության հարցեր

քննել է նաև խոսքի մասերը ներկայացնելիս՝ համապատասխան խորագրերով:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հոդվածի հեղինակը եզրակացնում է, որ բառակազմությանը վերաբերող հիմնական նյութը ներկայացված է ինչպես «Ընդհանուր տեսություն արելելեան նոր գրառը լեզուի հայոց», այնպես էլ «Քննական քերականություն մայրենի լեզուի» աշխատություններում: Երկրորդում, բացի տեսական նյութից, ամեն մի բաժնին կից տրվում են նաև գործնական առաջադրանքներ: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում առանձին խոսքի մասերի վերաբերող հատվածները, որոնց մասին հանգամանորեն խոսվում է հոդվածում: Ընդհանուր առմամբ՝ Պալասանյանի աշխատություններում ուշագրավ նորամուծություններ չկան, և կարելի է ասել, որ լեզվաբանն ի մի է բերել և ամփոփ ներկայացրել արևելահայերենի բառակազմության հիմնական օրինաչափությունները՝ այդպիսով հիմք դնելով նոր գրական լեզվի այս բաժինը գիտականորեն մշակելուն՝ երբեմն ցույց տալով նաև տարբերությունները հին գրական հայերենի համեմատությամբ:

Նոր բառեր, պրակ Զ (բառարան)

«Նոր բառեր» մատենաշարի հերթական Զ պրակում ներկայացվում են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող 2000 բառեր, որոնք վկայված չեն հայոց լեզվի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության է:

Զ պրակի հավելվածում ներկայացվում են մամուլից և համացանցից քաղված վեց տասնյակից ավելի նորակերտ տառային հապավումներ:

«Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» Ա գիրք (բառարան)

Բառարանը կ'ընդգրկէ 1000 բառեր, որոնք արեւմտահայերէնի որեւէ բառարանին մէջ տակաւին չեն վկայուած: Ատոնք քաղուած են արեւմտահայերէն արձակ ու չափածոյ ստեղծագործողներու գիրքերէն, տարբեր ամսագիրերէն, շաբաթաթերթերէն եւ օրաթերթերէն: Բառարանին մէջ գլխաբառէն ետք կը նշուին բառի խօսքիմասային պատկանելութիւնը, մասնագիտական ասպարէզը, կը տրուին բառի բացատրութիւնը՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն, օրինակը եւ աղբիւրը: Սոյն բառարանում չեն ներառուիր հնչիւնափոխ եւ անհնչիւնափոխ տարբերակները, ուղղագրական առանձնայատկութիւններով բնութագրուող բառամիւտորները, քանի որ ատոնք բառային նոր միւտորներ չեն դիտարկուիր:

Պապիկյան Ս., Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն (հոդված)

Ըստ հոդվածագրի՝ արաբական ծագման հատկական փոխառությունները հիմնականում գործածվում են, երբ խոսքը վերաբերում է որևէ ժողովրդի բնորոշ իրույթներին (ռեալիաներ), որոնք օտար մշակույթը, իրերը, սովորություններն անվանող հասկացություններ են: Ընդ որում, դրանց ճակատագիրը տարբեր է լինում, հաճախ կարող են ձեռք բերել միջազգային տարածվածություն՝ այնուամենայնիվ պահպանելով որոշակի ազգային նրբերանգ:

Արաբական ծագման հատկական փոխառությունների մի մասը հայերենին է անցել թուրքերենի կամ պարսկերենի միջնորդությամբ:

Հոդվածում արաբական ծագման հատկական փոխառությունները դասակարգվել են ըստ հետևյալ խմբերի՝ կրոնական, արվեստ-գրականությանը, պետական-կառավարման մարմիններին, հագուստին վերաբերող բառեր, ընդհանուր անվանումներ:

Ենթադրվում է, որ արաբական ծագման հատկական փոխառությունների մեջ կրոնական բնույթի բառերը շատ են: Հանդիպում են նաև ոչ հաճախական բառեր, ինչպես՝ *մամբար* «մզկիթի բեմ», *զեհետ* «մահմեդական կրոնավոր», *մալում* «մահմեդական կրոնի կարդացող, ուսուցիչ, իմամ»:

Պապիկյան Ս., Հատկական փոխառությունների քննություն (հոդված)

Փոխառությունների մեջ որոշակի քանակ են կազմում հատկականները, որոնք կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, ըստ բնագավառների, ըստ բառիմաստի փոփոխության, ըստ հաճախականության, ըստ ժամանակային հատկանիշի և այլն:

Հոդվածագրի նպատակն է եղել քննել պարսկերենից և թուրքերենից հայերենին անցած «զինվոր-զորք» իմաստային խմբին պատկանող մի քանի հատկական փոխառությունների իմաստների փոփոխությունները: Դրանք ակտիվ բառապաշարի մաս չեն դարձել. հիմնականում ոճական նպատակով գործածվելով՝ ավելի լիարժեք են դարձնում տվյալ ժողովրդի նիստուկացի ու ազգային մշակույթի, հոգեկերտվածքի ընկալումը: Սովորաբար հատկական փոխառությունների գործածությունը առաջացնում է որոշակի զգացողություններ՝ կապված փոխատու լեզվի իրույթների (ռեալիաներ) հետ, որոնք խորհրդանշում են օտար մշակույթը: Երբեմն էլ այդ բառերն օգտագործվում են՝ որոշակի կոլորիտ ստեղծելու, խոսքին արտահայտչականություն հաղորդելու համար:

Հոդվածում դիտարկվող պարսկական ծագումով *մոջահեդ* և *շահիդ* հատկական փոխառությունները ձեռք են բերել աշխարհում կատարվող հասարակական-քաղաքական գանազան իրադարձություններին առնչվող նոր իմաստներ: Հոդվածագրի կարծիքով՝ այդ բառերն իմաստի ընդլայնում են ունեցել կցորդության և զգացական-վերաբերմունքային հիմունքներով: Թյուրքական ծագումով հատ-

կական փոխառություններից դիտարկվել են *ասկյար, բաշիրոզուկ, ղզլբաշ, յանիչար/ենիչերի, չավուշ, հորդա/օրդա* բառերը, որոնցից մի քանիսն արաբերենից կամ պարսկերենից է, և հայերենին է անցել թուրքերենի միջնորդությամբ:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ երկար ժամանակ գտնվելով օսմանական և պարսկական տիրապետությունների տակ՝ հայ ժողովուրդը տարաբնույթ շփումների հետևանքով այդ լեզուներից կատարել է բազմաթիվ, այդ թվում՝ միայն դրանց բնորոշ փոխառություններ: Դիտարկվող «զինվոր-գորք» իմաստային խմբին պատկանող հատկական փոխառությունները, բացի իրենց առաջնային իմաստից, ենթարկվելով իմաստափոխության տարբեր հիմունքներով, ձեռք են բերել փոխաբերական գործածություն:

Սարգսյան Ն., Արդի հայերենի նորագույն հապավումները
(հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքի փոփոխություններն անմիջականորեն արտահայտվում են հապավումներում: Քննվում են նորակերտ տառային, վանկային և խառը հապավումները, դիտարկվում գործածվող փոխառյալ հապավումները: Առանձնացվում են նաև այսպես կոչված տեղային հապավումները, որոնք հայտնի են միայն նեղ շրջանակի և համընդհանուր գործածություն չունեն տվյալ լեզվով խոսողների շրջանում:

Սաֆարյան Տ., Բառիմաստի հետ կապված շեղումներն արդի հայերենում (հոդված)

Հոդվածագրի դիտարկմամբ՝ բառիմաստին առնչվող շեղումները մեծ մասամբ բխում են բառերի նմանահունչ արտասանությունից, հոմանիշությունից և կամ սխալ գրությունից: Քննվում և փաստարկվում է այն, որ շեղումներ կարող են առաջանալ նաև

բառիմաստի ընդլայնման պատճառով, և պետք է ուշադիր հետևել համատեքստի ոճական նրբերանգներին:

Շեշտվում է, որ բառիմաստի շեղումների մեջ երբեմն դեր է խաղում նաև բառակազմությունը, որը շատ ավելի բնորոշ է մասնագիտական բառապաշարին:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ բառիմաստից բխող շեղումներ առաջացնում է ոչ միայն հոմանիշությունը, այլև անգամ իմաստային հակադրությունը, կարող են դեր խաղալ նաև բառակազմական ինչ-ինչ իրողություններ:

Սաֆարյան Տ., Բառագործածական շեղումներ արդի հայերենում՝ կապված հնչյունական կազմի հետ (հոդված)

Հոդվածում քննվում են բառերի արտասանական նմանությունից առաջացող բառագործածական սխալները: Ըստ հեղինակի՝ որոշ դեպքերում կարող է դեր խաղալ գրաբարյան «ն» արմատական վերջնահնչյունը: Առանձնացվում են *ա* հոդակապի անհարկի հավելումով և խոսակցական լեզվում հոդակապի սղումով առաջացած շեղումները: Սխալների խումբ է դասակարգվում, երբ դուրս է ընկնում միջնահնչյունը կամ վերջնահնչյունը: Միջնահնչյունի անկման այլ օրինակների մեջ առանձնացվում է երկհրնչյունների սխալ հնչյունափոխությունը, որը հաճախադեպ է *-ույ* երկհնչյունի պարագայում: Քննվում է բառագործածական շեղումների մի խումբ, որն առաջացել է հնչյունների և մասնիկների հավելումներից և դրափոխությունից:

Հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ բառերի հնչյունական կազմին առնչվող սխալները կարող են առաջանալ արտասանական նմանության, հնչյունների, հոդերի ու հոդակապի անհարկի հավելման ու սղման, դրափոխության հետևանքով, ունենալ խոսակցական կամ գրաբարյան ակունքներ:

**Սուքիասյան Հ., Զաքարյան Հ., Հայերեն բժշկագիտական
եզրույթների ինքնատիպության խնդրի շուրջ (հոդված)**

Հոդվածը վերաբերում է գրական հայերենի ինքնատիպության, դրա պատճառների և դրսևորման ձևերի խնդրին մասնավորապես բժշկագիտական եզրույթների օրինակով: Լեզուների շրջման ու փոխազդեցության հետևանքով հայերեն խոսքի մեջ պարբերաբար ներթափանցող փոխառությունները ճնշող մեծամասնությամբ մշտական տեղ չեն գտել գրական լեզվում, անգամ եթե դրանք լայնորեն տարածվել են խոսակցական լեզվում, այլ հրնթացս կամ որոշ ժամանակ գործածվելուց հետո աստիճանաբար փոխարինվել և փոխարինվում են հայերեն նորակազմություններով: Գրական լեզուն յուրացնում է միայն սակավաթիվ փոխառություններ:

Պարզելու համար փոխառյալ ու ոչ փոխառյալ եզրույթների հարաբերակցությունը, ինչպես նաև ժամանակային, ոճական ու գործառական բաշխումը, իմաստային, կառուցվածքային ու ծագումնաբանական շերտաբանությունը՝ հոդվածում բժշկագիտական եզրույթները դասակարգվում են ըստ հայերեն և օտար տարբերակների գործածականության:

Եզրակացությունն այն է, որ հայերեն բժշկագիտական եզրութաբանության հիմնական մասն աչքի է ընկնում ինքնատիպությամբ, քանի որ այդ եզրույթները հայերենում ավանդաբար գոյություն ունեցող բառեր կամ հայերենի բառակազմական միջոցներով բաղադրված հին ու նոր կազմություններ են: Այդ ինքնատիպությունը ծավալվելու հակում ունի շնորհիվ ինքնամաքման միտումի:

**Տիդյան Ս., Նորամուտ օտար բառերի սխալ
գործածությունների մասին (*ինտեգրացիա,
ասոցիացիա, մոտիվացիա*) (հոդված)**

Հոդվածում դիտարկվում են գրական հայերենում կիրառվող օտարաբանություններից առավել հաճախական երեքը՝ *ինտեգրացիա, ասոցիացիա, մոտիվացիա* բառերը՝ իմաստային հնարավոր բազմապիսի դրսևորումներով: Ուսումնասիրությամբ պարզվում է, որ ավելի գործուն են դարձել *ինտեգրացիա* բառի «ներգրավվել, ներառվել» իմաստները. արևմտահայերենում այն *համարկել* համարժեքն ունի, որը, ըստ հոդվածագրի, հարկ է թերևս ներառել արևելահայերենի բառապաշարում: *Ասոցիացիա*-ի դեպքում մոտեցումն այն է, որ դրա իմաստներին կարելի է հավելել «միտք, մտահղացում»-ը, իսկ *մոտիվացիա* բառի իմաստներին՝ «բացատրություն, մեկնաբանություն-հիմնավորում»-ը՝ չանդրադառնալով դրա երբեմն անհարկի իմաստային դրսևորումներին:

**Տիդյան Ս., Բառապաշարի գուգադիր քննություն.
հոմանիշ բառերը գրական հայերենում (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից գրական հայերենի երկու լեզվաճյուղերում՝ արևելահայերենում և արևմտահայերենում, գործածվող այն հոմանիշները, որոնք դրսևորում են բառակազմական, իմաստային և կիրառական տարբերություններ՝ հաղորդակցման շփոթ ստեղծելով երկու ճյուղերի լեզվակիրների շրջանում: Այսպես. եթե հոմանշային *ատամ-ակռա* գույգը տարբերակվում է միայն լեզվաճյուղերով. *ատամ*-ը՝ հիմնականում արևելահայերենում, իսկ *ակռա*-ն՝ բացարձակապես արևմտահայերենում (նույնը վերաբերում է *ատումային-հյուլեային* (զենք) և *միջուկային-կորիզային* (զենք) հոմանշային գույգերին), ապա *բաժակ-գավաթ* գույգը, որ հավասարապես հասկանալի է թե՛ արևելա-

հայերին, թե՛ արևմտահայերին, տարբերվում է միայն մեկ՝ մարզական բնագավառում ունեցած կիրառություններով. արևելահայերենը գործածում է *զավաթ* եզրույթը, իսկ արևմտահայերենը՝ *բաժակը*: Նույն ոլորտում մարզիկի «քաշային կարգ» ընդհանուր իմաստի դրսևորմամբ արևելահայերենում առկա է *կարգ* գոյականը, իսկ արևմտահայերենում՝ *դասակարգը*: Իմաստային ակնհայտ ընդհանրություն է առկա *բնատուր-ինքնեկ* գույգում՝ որպես «բնության պարզևած, ի ծնե ունեցած» շնորհք, սակայն դատելով *ինքնեկի*՝ «ԱՐԵՎԱԿ»-ում արձանագրված տասներկու օրինակներում առկա իմաստներից՝ կարելի է փաստել դրա չվկայված մի իմաստի գոյությունը. այն է՝ «ինքնըստինքյան»:

Այսպիսով՝ բառերի հոմանշային շարքերի նման քննությունը, բացահայտելով ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական երևույթներ, նպաստում է գրական հայերենի երկու ճյուղերի լեզվակիրների լեզվական շփումը՝ դյուրացնելուն. քննությանմբ նաև ի հայտ են գալիս բառերի բառարաններում դեռևս չվկայված իմաստներ:

**Քիլերճեան Պ., Արևմտահայերէն լեզուի ուսուցման
գործընթացը հիբրիդային ուսուցման ձևաչափով (հոդված)**

Հոդվածում արծարծում են սփիւռքի գաղութներու դպրոցներուն ու հայագիտական հիմնարկներուն մէջ արեւմտահայերէնի պահպանման եւ դպրոցներուն մէջ մայրենիի դասաւանդման խնդիրներ: Եվ քանի որ այդ դպրոցները/հիմնարկները ունին արեւմտահայերէնի մասնագէտներու պակաս, ուստի, ըստ հեղինակի, խառը (հիբրիդային) ուսուցումը կրնայ որոշ չափով մեղմել խնդիրը:

**Ֆիշենկճեան Ա., *Թեք* վերջնաբաղադրիչով բարդ բառեր
հայերէնի մէջ (հոդված)**

Թեք վերջնաբաղադրիչով բարդ բառերը հայերէնի մէջ սակաւ են: Անոնք ընդհանրապէս խօսքի մէջ հանդէս կու գան ածականական և երբեմն մակբայական կիրարկութեամբ: *Թեք*-ը որպէս ածական բառարաններուն (արեւելահայերէն և արեւմտահայերէն) մէջ կը բացատրուի «շեղած, կոր, ծռած», իսկ որպէս մակբայ՝ «դէպի մի կողմ կախուած, որու մակերեսին մէկ կողմը բարձր է միւսէն» իմաստներով: Ուստի *թեք* վերջնաբաղադրիչով բարդ բառերը յաճախ կը գործածուին իրենց բուն նշանակութեամբ, երբեմն ալ, սակայն, իմաստային նոր երանգ կը դրսեւորեն հայերէնի մէջ, ինչպէս՝ *միայն թեք* բառը. օրինակ՝ «Նոյեմբեր 18-ին, /1924թ./ Կ. Կոմիտէն ընտրեց յանձնախումբ մը ընկերներ Լ. Գարագաշեան, Արամ Սահակեան և *միայն թեք*, պարտք դնելով անոնց վրայ, միջոցներ ձեռք առնել թերթի հրատարակութիւնը արագացնելու»: Այս նախադասութեան մէջ *թեք*-ը «թեքութիւն» իմաստով չէ գործածուած, այլ փոխաբերական իմաստով և կը նշանակէ «համակիր», «քաղաքական այլ հայեացքներ ունեցող»:

**Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

2021 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարգսյան Մ.Ա., Լեզվաբանության տեսության հարցեր, Ե., «Տիր»
հրատ., 2021, 204 էջ:

Սարգսյան Մ.Ա., «Հայերեն էլեկտրոնային սրբագրման համա-
կարգ» ուղեցույց ակնարկ, Ե., «Տիր» հրատ., 2021, 128 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ավետյան Ս.Ռ., Անվանական հոլովման տիպաբանական զար-
գացումը հայերենում, «Հայագիտության հարցեր», № 1 (22), Ե.,
«Գիտություն» հրատ., 2021, էջ 223-236:
2. Ավետյան Ս.Ռ., Հնդեվրոպական անվանական հիմքերի վերջա-
հանգ ձայնավորների ձևաբանական կարգավիճակը հին հայե-
րենում, «Պատմաբանասիրական հանդես», № 1 (216), Ե., «Գի-
տություն» հրատ., 2021, էջ 170-179:
3. Ավետյան Ս.Ռ., *Կու (կը)* մասնիկով կազմություններն արևելա-
հայերենում (համաժամանակյա և տարաժամանակյա քննու-
թյուն), «Վեմ» համահայկական հանդես, թիվ 4 (76), Ե., «Վեմ
հանդես» հրատ., 2021, էջ 140-155:
4. Ավետյան Ս.Ռ., Հրամայական եղանակը դասական հայերենում
տիպաբանական և պատմական տեսանկյունից, ԲԵՀ, Բանասի-
րություն, հ. 3 (36), Ե., ԵՊՀ հրատ., 2021, էջ 40-55:
5. Գրիգորյան Գ.Գ., Խոսակցական լեզվում *զալ, տալ, լալ* բայերի
ձևերի ս-ի անկման պատճառների մասին, «Լեզու և լեզվաբա-
նություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 77-84:

6. Գրիգորյան Գ.Գ., Ականավոր հնչյունաբաններ (տեղեկատվական հոդված), Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 8-27:
7. Հակոբյան Ֆ.Ա., Հայերենի ձևային նկարագրության խնդիրներ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 108-115:
8. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանություն, հայ. *հարկ*- < հե. *(H)a/ork/g-t-, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 60-69:
9. Համբարձումյան Վ.Գ., Գրիգորյան Գ.Գ., Ընդհանուր և համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 57-90:
10. Համբարձումյան Վ.Գ., Սահակ կաթողիկոս Ձորոփորեցու երկերի բառապաշարը, «Էջմիածին», 2021 (ՀՀ) տարի, է, էջ 121-130:
11. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանական դիտարկումներ, «Լեզու և լեզվաբանություն» 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 27-43:
12. Համբարձումյան Վ.Գ., Բաղրամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Սեռանիշ ածանցների արտահայտությունը հայերենում, «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 68-76:
13. Համբարձումյան Վ.Գ., Հին լեզուների դասավանդման կարևորությունը նոր լեզուների ճիշտ ուսուցման մեջ, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021, էջ 85-89:
14. Միքայելյան Ս.Ա., Օտար լեզուների արդի ուսուցման հայեցակարգի շուրջ, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021 էջ 18-27:

15. Սարգսյան Մ.Ա., Էլեկտրոնային սրբագրիչի տվյալների շտեմարանի բառապաշարի ձևային նկարագրության խնդիրների մասին, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, հ. 1(58), Ե., 2021, էջ 229-237:
16. Սարգսյան Մ. Ա., Գենդերային լեզվաբանությունը որպես լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն, «Գիտության աշխարհում», № 3, Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 2-9:
17. Սարգսյան Մ. Ա., Խաչիբաբյան Ն. Պ., «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, «Լեզու և լեզվաբանություն», հ. 1 (24), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2021, էջ 69-74:
18. Sargsyan M.A., On the Electronic Database of the Armenian Word-formation, "Kachar", 2, 2021, pp. 56-65.
19. Sargsyan M.A., On the Problems of Teaching Armenian as a Second Language. In: Socio-cross-cultural Approach and Educational Technologies: Interdisciplinary Aspect: monograph. / Ed. By Gennady A. Ferapontov, Olga V. Mishutina. – Novosibirsk State Pedagogical University. – Novosibirsk: NSPU University Press, 2021. – Pp. 16-23.
20. Սարգսյան Մ.Ա., Հայերենի իմացության մակարդակների առանձնացում ըստ միջազգային չափանիշների, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021 էջ 6-17:

**Ավետյան Ս., Անվանական հոլովման տիպաբանական
զարգացումը հայերենում (հոդված)**

Հոդվածում դիտարկվում են հնդեվրոպական անվանական հոլովման տիպաբանական փոփոխությունները հայերենում մինչև արդի հայերենի փուլը: Հնդեվրոպական առանձին տիպաբանական հատկանիշները հայերենում փոփոխվել են ժամանակագրական տարբեր փուլերում: Այդ տեսանկյունից հին հայերենը՝ եզակի ուղղականի գրոյական վերջավորությամբ, բայց միևնույն ժամանակ կուտակական (cumulative) հոլովաթվային ցուցիչներով, տիպաբանորեն անցումային լեզվավիճակ է հնդեվրոպական նախալեզվի թեքական և միջին հայերենի (ինչպես նաև արդի հայերենի) կցական հոլովման տիպի միջև: Փորձ է արվում փաստարկելու, որ միջին հայերենում անվանական հոլովման տիպաբանական անցումը կուտակական արտահայտողականությունից առանձնական (separative) արտահայտողականության պայմանավորված չէր հարևան լեզուների ազդեցությամբ, ինչպես ենթադրվում է սովորաբար, այլ դա անմիջական և միանգամայն սպասելի հետևանք էր այն բանի, որ նոր հոգնակերտ մասնիկները առաջացել են հին հայերենի եզականաձև հոլովվող հավաքական հոգնակերտներից: Մյուս կողմից՝ երբեմնի հավաքական հոգնակերտների՝ կանոնավոր (սովորական) հոգնակերտների վերածվելու գործընթացը նույնպես ունեցել է ներհամակարգային պայմանավորվածություն: Մասնավորապես՝ այն հանգամանքը, որ հին հայերենի *ք* հոգնակերտը աճող միտում էր դրսևորում գործառելու նաև որպես զուտ բառակազմական ածանց, անխուսափելիորեն թուլացնում էր նրա հոգնակերտ արժեքը՝ առաջացնելով նոր հոգնակերտի անհրաժեշտություն:

**Ավետյան Ս., Հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ
ձայնավորների ձևաբանական կարգավիճակը հին հայերենում
(հոդված)**

Նախագրային հայերենում շեշտահաջորդ վերջնականների սղման հետևանքով հիմքի վերջահանգ ձայնավորները բուն թեքայթների հետ ընկել են եզակի ուղղականում և հայցականում, բայց պահպանվել են թեք հոլովներում, այնպես որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իբրև ուղիղ հոլովական հիմք և ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մյուս հոլովների կազմության համար: Այդ ամենի շնորհիվ հ.-ե. անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները, որոնք սկզբնապես հանդես էին գալիս բոլոր հոլովներում, հին հայերենում վերախմաստավորվել և դարձել են թեք հիմքակազմիչ մասնիկներ: Բայց այն հանգամանքը, որ հին հայերենում հիմքակազմիչ ձայնավորները բացակայում էին ոչ միայն եզակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հոլովներում, անխուսափելիորեն նպաստում էր խոստոյների՝ այդ ձայնավորների և բուն վերջավորությունների կապակցությունների իբրև միասնական կազմիչներ գիտակցելուն: Եվ արդեն միջին հայերենում երբեմնի հիմքակազմիչ ձայնավորները լիովին ձեռք են բերել հոլովական վերջավորությունների կարգավիճակ՝ մասամբ ինքնուրույնաբար, մասամբ էլ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ընդ որում՝ հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հոլովական ցուցիչների հանգեցրել է երբեմնի հոլովական հիմքային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացուցային բազմահիմքության խիստ սահմանափակմանը:

**Ավետյան Ս., Հրամայական եղանակը դասական հայերենում
տիպաբանական և պատմական տեսանկյունից (հոդված)**

Հայտնի է, որ դասական հայերենում հիմնականում եզ. 2-րդ դեմքի համար հրամայականն ունի հատուկ ձև, որը տարբեր կազմություններ, երբեմն էլ զուգաձևեր է հանդես բերում (հատկապես՝ կրավորաձև խոնարհման դեպքում. հմմտ. *իմանամ, ացայ-իմա / իմա ց/իմացի՛ր, լուանամ, ացայ - լուա /լուացի՛ր, խօսիմ, եցայ-խօ -սեա /խօսեա՛ց* են): Դասական հայերենի համապատասխան փաստերի համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծությամբ ենթադրություն է արվում, որ նախագրային հայերենում շեշտահաջորդ վերջնավանկերի անկումից հետո միևնույն առիստի հիմքը (որի վերջահանգ *ց*-ն բազմավանկ ցոյական հիմքերի դեպքում ընկել էր) սկզբնապես կիրառվում էր հրամ. եզ. 2-րդ դեմքի իմաստով և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհման պարագայում (այսինքն՝ *իմա՛, լուա՛, խօսեա՛* են): Իսկ առիստի վերջահանգ *ց*-ով հիմքը և *-իր* վերջավորությամբ ձևը կրավորաձև հրամ. եզ. 2-րդ դեմքի նշանակությամբ (հմմտ. *իմա ց/իմացի՛ր, լուացի՛ր, խօսեա՛ց* են) սկսել են գործառել ավելի ուշ՝ *ներգործաձև խոնարհում-կրավորաձև խոնարհում* ձևաբանական տարբերակման, մասամբ էլ համակարգային ճնշման պահանջով: Ըստ այդմ՝ դասական հայերենում միջին սեռի մի խումբ բայերի հրամ. եզ. 2-րդ դ. ներգործակերպ ձեվերը (հմմտ. *նստիմ, նստայ - նի՛ստ, դառնամ, դարձայ- դա՛րձ, լուանամ, ացայ -լուա՛* են) հարկ է դիտել իբրև հաճախագործածության շնորհիվ պահպանված մնացորդային կազմություններ:

**Ավետյան Ս., Կու (կը) մասնիկով կազմություններն
արևելահայերենում (համաժամանակյա և տարաժամանակյա
քննություն) (հոդված)**

Հոդվածում փորձ է արվում ցույց տալու, որ տիպաբանական տվյալները հաստատում են Հ. Աճառյանի այն վարկածը, ըստ որի՝ հայերենի՝ այժմյան դերբայավոր ներկայի ձևեր ունեցող տարբերակներում ևս **կու (կը)**-ով ձևերը սկզբնապես կիրառվել են ներկայի բոլոր հիմնական իմաստներով, այդ թվում՝ ընթացքային (progressive) ներկայի իմաստով: Ըստ լեզվաբանական տիպաբանության տվյալների՝ երբ քերականացման եղանակով նոր ընթացքային ներկայի ձև է առաջանում, հին ներկայի ձևը սովորաբար սահմանափակվում է սովորութային, ընդհանրական ներկայի և ապառնիի կիրառություններով: Հետագայում այդ նոր ընթացքային ձևը կարող է ձեռք բերել նաև սովորութային, ընդհանրական ներկայի իմաստ և այդ գործածությամբ ևս դառնալ պարտադիր: Այդ դեպքում հին ձևը սահմանափակվում է ապառնիի կիրառությամբ: Մյուս կողմից՝ հին ներկայի ձևը բավական երկար շարունակում է գործածվել պատմական, պատմողական ներկայի իմաստով, եթե նույնիսկ այն արդեն դուրս է մղվել իր հիմնական իմաստագործառական դաշտից և փոխարինվել նոր ձևով: Այդ առումով հատկապես պահպանողական է բանահյուսական ժանրը, որում հին ներկայի ձևերը սովորաբար հանդես են գալիս որպես պատմողական ժամանակներ: Արդ, հատկանշական է, որ արևելահայերենում, որում ներկայի հիմնական ձևերն ունեն դերբայավոր կառուցվածք, **կու (կը)**-ով ձևերը, որպես կանոն, ընթացքային ներկայի իմաստ չեն արտահայտում, այլ ապառնիի իրենց բուն իմաստից բացի՝ գործածվում են միայն պատմական, պատմողական և/կամ ընդհանրական, սովորութային ներկայի իմաստով: Իմաստագործառութային այդպիսի բաշխումը վերոնշյալ տիպաբանական ընդհանուր օրինաչափությունների տեսանկյունից ակնհայտորեն վկայում է երբեմնի բազմագործառությո ներկայի

հետագա իմաստային սահմանափակման մասին: Միննույն ժամանակ XVII-XVIII դդ. տարբեր գրավոր հուշարձանների լեզվական քննությունը թույլ է տալիս ենթադրելու, որ **կու (կը)**-ով ներկայի ձևերի՝ նոր դերբայավոր ձևերով փոխարինվելու գործընթացը և հին ու նոր ներկաների համապատասխան իմաստագործառության տեղաշարժերը հայերենի տարբեր տարածական տարբերակներում տեղի են ունեցել ոչ միաժամանակ և ոչ նույն չափով:

Գրիգորյան Գ., խոսակցական լեզվում *գալ, տալ, լալ* բայերի ձևերի *ս*-ի անկման պատճառների մասին (հոդված)

Գալ, տալ, լալ անկանոն բայերի անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերի ժխտականը կամ ժխտական-հարցականը կազմելիս խոսակցական լեզվում շատ հաճախ *ս*-ն ընկնում է, որը ապոկոպի ցայտուն օրինակ է և համատարած բնույթ ունի (*չես գալիս*-ի փոխարեն հնչում է *չես գալի*):

Փորձառական հետազոտությամբ նպատակ է եղել պարզելու, թե ինչու է խոսակցական լեզվում տեղի ունենում այս անկումը, և արդյո՞ք դա պայմանավորված է արտասանության թուլացմամբ, թե՞ տնտեսման սկզբունքով: Ըստ դիտարկումների՝ տևողության, ուժգնության, հաճախականության և ֆորմանտների թվային տվյալները հավասարակշռում են միմյանց, այսինքն՝ եթե տևողության տվյալները մեծ են մի դեպքում, ապա մյուս դեպքում մեծ են ուժգնության տվյալները: Քանի որ խոսակցական լեզվում *գալ* և *տալ* անկանոն բայերի անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերում ուղիղ և շրջուն շարադասության պարագայում *ս*-երը օրինաչափորեն մեծ փոփոխություններ չեն կրում, ուստի կարելի է ենթադրել, որ *ս*-ի անկումը պայմանավորվում է այլ պատճառներով: Ենթադրելի է նաև, որ խոսակցական լեզվում *ս*-ի անկումն առնչվում է տնտեսման սկզբունքին, երբ *իս* վերջավորության փոխարեն գործածվում է *ի*, սակայն պարզորոշ է, որ խոսքը

անկատար ժխտականի կամ ժխտական-հարցականի մասին է: Հնչաշղթայում արտասանական մեծ փոփոխություններ չեն կատարվում, որոնց մասին փաստում են տևողության, ուժգնության, հաճախականության և ֆորմանտների տվյալները:

Գրիգորյան Գ., Ականավոր հնչյունաբաններ (հոդված)

Ներկայացվում են մի քանի ականավոր հնչյունաբանների (Բողունեն դե Կուրտենե, Լև Շչերբա, Նիկոլայ Տրուբեցկոյ, Վասիլի Բոգորոդիցկի, Ռուբեն Ավանեսով, Ալեքսանդր Ռեֆորմատսկի) կենսագրական տվյալները և նրանց գիտական գործունեության մասին տեղեկություններ: Նրանք կարևորագույն ներդրում են ունեցել հնչյունաբանության բնագավառում:

Հակոբյան Ֆ., Հայերենի ձևային նկարագրության խնդիրներ (հոդված)

Հոդվածը վերաբերում է հայերենի լեզվական համակարգի լիակատար և ամբողջական ձևային նկարագրության հնարավորություններին և խնդիրներին: Ներկայացվում են հայերենի ձևային նկարագրության ուղղությամբ կատարված տեսագործական աշխատանքները. նշվում է, որ դրանք խիստ մասնավոր բնույթ են կրում, անավարտ են, հատվածական, ոչ ամբողջական: Ըստ հոդվածագրի՝ հայերենի ձևային նկարագրության սկզբունքները մշակելիս պետք է հաշվի առնել այդ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները և ճիշտ ընտրել ձևային նկարագրությամբ ստեղծվելիք ծրագրաշարի տեխնոլոգիական հենքը:

**Համբարձումյան Վ., Հին լեզուների դասավանդման
կարևորությունը նոր լեզուների ճիշտ ուսուցման մեջ (հոդված)**

Հոդվածն անդրադառնում է ներկայումս նոր պայմաններում և պահանջներին համապատասխան դասավանդվող լեզուների ավելի լայն և ընդգրկուն ուսուցման մեջ նաև ինչ-որ ձևով հին լեզուների (առանձնապես հունարենի և լատիներենի) ներառման կարևորությունը:

Նկատի է առնվում հատկապես նոր լեզուների (օրինակ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) տերմինաբանությունը, որի ակունքները հին լեզուներում են: Ըստ այդմ՝ բերվում և վերլուծվում են համապատասխան հիմնավորման օրինակներ՝ նոր լեզուների տարբեր մակարդակների միավորներից:

**Համբարձումյան Վ., Ստուգաբանություն. հայ. *հարկ*- < հե.
*(H)a/ork/g-t- (հոդված)**

Հոդվածում հայերեն *հարկանեմ* (*զարկանեմ*, *արկանեմ*) բայի ծագումնային քննության հիմքը գիտությանը ներկայումս հայտնի նոր տվյալներն են: Ըստ այդմ՝ քննությունն առնչվում է նոր խնդիրների, ենթադրում նույնպիսի լուծումներ: Հարց է ծագում՝ ավանդաբար առանձնացվող հե. *p > հայ. h (հմմտ. հե. *p > ph > f > h) օրենքին հակասո՞ւմ է հե. *H > հայ. հ, խեթ. փ, կելտ. ø (զրո) համընկնումը, թե՞ նոր խնդիր է առաջ բերում, որի վերջնական լուծումը պիտի հիմնվի լրացուցիչ փաստերի վրա, և այդ փաստերն օգտագործվում են: Լեզուների տվյալները հնարավորություն են ընձեռում մասամբ քննելու և համապատասխան վերլուծությամբ հիմնավորելու վերը նշված հարցադրումը (թեկուզ իբրև վարկած): Ըստ այդմ՝ հայերենի տվյալների հնավանդ (արխաիկ) լինելը (ինչպես խեթականի, թոխարականի, արևելաիրանականի և այլն) արդի համեմատական-տիպաբանական լեզվաբանության համար

(մի քանի տասնամյակ է, որ նկատելի է) ունի որոշակի կարևորություն:

**Համբարձումյան Վ., Սահակ կաթողիկոս Ձորովորեցու
երկերի բառապաշարը (հոդված)**

Սահակ կաթողիկոս Ձորովորեցին VII դ. վերջի և VIII դ. սկզբի՝ Հայ Եկեղեցու հայրապետն է, որն իր ողջ կյանքը նվիրաբերել է հայ ազգի ինքնությունը պահպանելուն և հավատքը զորացնելուն: Լիովին տիրապետելով ժամանակի անհրաժեշտ գիտելիքներին, նաև լեզուներին (օրինակ՝ արաբերենին. հայտնի է նրա մի թուղթը՝ ուղղված արաբ ոստիկանապետին)՝ իր ազգի հոգսերով ապրած մեծություն է հայոց հայրապետը: Նրա երկերը եղել են միայն բանասիրական-բնագրագիտական քննության առարկա: Մինչ այժմ չկա այդ երկերի լեզվի բառապաշարին նվիրված որևէ ուսումնասիրություն՝ դիտարկված հին գրական հայերենի պատմության տեսանկյունից:

Հոդվածում քննվում են այդ երկերի բառապաշարի այն միավորները, որոնք չկան Նոր հայկազյան բառարանում կամ զուգահեռաբար վկայվում են հեղինակների երկերում, մեկ-երկու դեպքում՝ բնագրային նոր իմաստային կիրառությամբ:

**Համբարձումյան Վ., Ստուգաբանական դիտարկումներ.
հայ. հերկ<հե. *p^(h)erk^(h)o- (հոդված)**

Հայտնի է, որ Խորենացուց ավանդված վիպական «Երկներ երկիր....» պատառիկն անցյալի բանասիրական որոշ աշխատություններում քննվում է իբրև Վահագն դիցական սյուժեի մի երևույթ, «թեագոնիական ցիկլի» մի հատված: Հայտնի է նաև, որ այդ ցիկլը ներկայանում է երեք մասով՝ տիեզերածնություն, երկրագործություն և պտղաբերություն: Ըստ այդմ էլ, հայերենում, իբրև հնդեվրոպական պատկերացումների արտահայտություն, ցիկլային համա-

ձույլ (սինթետիկ) դրսևորման միավոր է *հերկեմ* բայը, որն առանձնանում է այսպես կոչված բազմիմաստությամբ:

Հերկ [*<(h)երկ-* (?)] «(հողը՝ արտը) պատռել, զատել» իրարից առանձնացնել. վարել» (որոշակի իմաստով) բառը առնվազն ունի երկու կարգի բաղադրության հենք: Հ.-ե. **p^(h)erk^(h)o-*արմատը տարբերակներ ունի ոչ միայն հիմք-լեզվում, այլև հայերենի (նաև բարբառների) բազմաթիվ հնչյունական և իմաստային դրսևորումներում:

Ըստ հոդվածագրի՝ ենթադրելի է հիմք-լեզվի արմատի տարբերակների ընդհանուր «զատել, կիսել, երկատել» իմաստ այսպես կոչված «ավելի նախնական վիճակի» համար:

Համբարձումյան Վ., Բաղրամյան Ս., Խաչիբաբյան Ն., Սեռանիշ աճանցների արտահայտությունը հայերենում (հոդված)

Հոդվածն անդրադառնում է սեռ ցույց տվող մի քանի աճանցների, որոնք գործածական են ժամանակակից հայերենի նորագույն շրջանում: Սեռը գոյականին հատուկ քերականական կարգ է, որը բնորոշ է շատ լեզուների, սովորաբար սեռերը երեքն են՝ արական, իգական և չեզոք: Անգլերենը և հայերենը չունեն նման տարանջատում, ընդ որում գտնում են, որ հայերենը ևս, լինելով հնդեվրոպական լեզու, ունեցել է սեռի քերականական կարգ, որը ժամանակի ընթացքում կորցրել է: Ժամանակակից հայերենի գոյականների համակարգում կա միայն բնական սեռային տարբերակում, որը կատարվում է կա՛մ բառային (*մաքի-խոյ, աղջիկ-տղա, հավ-աքաղաղ*), կա՛մ բառակազմական միջոցներով (*ուսանող-ուսանողուհի, ուսուցիչ-ուսուցչուհի*):

Կան բառակազմական կաղապարներ, որոնք պատմական փոփոխությունների ընթացքում հնանում են, դուրս մղվում կամ գործածվում են մասնակիորեն՝ իբրև ոչ գործուն միջոցներ: Այդպիսի իգականակերտ մասնիկներ են՝ *-իա, -իթա (եթ), -անուշ, -ուշ, -դուխտ* և *-ուհի*, որոնցից *-իա*-ն և *-իթա*-ն համարվում են ոչ կեն-

սունակ, իսկ *-ուհի*-ն ունի լայն կիրառություն: Արդի հայերենում *ուհի*-ն ամենատարածված ածանցն է, որով կազմվում են հատուկ և հասարակ գոյականներ՝ *Հայկուհի, Տիգրանուհի, Նաիրուհի, տիրուհի* և այլն: *-Որդ* ածանցը կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված առարկային առնչվող մասնագիտությամբ զբաղվող» բառակազմական նշանակությամբ, օրինակ՝ *նավորդ, դահուկորդ, մրցորդ* և այլն:

Միքայելյան Ս., Օտար լեզուների արդի ուսուցման հայեցակարգի շուրջ (հոդված)

Հոդվածում ներկայացվում է օտար լեզվի արդի ուսուցման հայեցակարգը: Այդ համատեքստում կարևորվում են լեզվի իմացության միջազգային չափանիշները, որոնց հիմքում «մակարդակային» մոդելն է: Այն ներառում է օտար լեզվի համապարփակ ուսուցման համար անհրաժեշտ լեզվական չորս՝ գրելու, կարդալու, խոսելու և լսելու հմտությունները: Շեշտվում է վերջինի կարևորությունը, քանի որ այն թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ մշակված և արդյունավետ դասավանդման բաղադրիչներից է: Ներկայացվում է նաև օտար լեզվի դասավանդման արդի՝ «ուղիղ» կամ «բնական» մեթոդը: Ի թիվս ավանդական մեթոդներից այլ տարբերությունների՝ նրան բնորոշ է միջնորդ լեզվի բացակայությունը:

Հոդվածագիրն այս համատեքստում նկատում է, որ հայերենի իմացության և ուսուցման՝ միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան մշակված մեթոդաբանություն չկա: Հայերենը դասավանդվում է ավանդական մեթոդներով՝ ռուսերենի և անգլերենի միջնորդությամբ: Առաջարկվում է հայերենի ուսուցման նոր ձեռնարկներ կազմելիս առաջնորդվել լեզվի ուսուցման արդի հայեցակարգով:

Համադրելով և կիրառելով օտար լեզվի ուսուցման տարբեր մեթոդներ՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ «ուղիղ» մեթոդն անավել արդյունավետ է լեզվի գործնական-հաղորդակցական իմա-

ցության համար: Ակադեմիական-մասնագիտական ուսուցումը ներառում է այլ պահանջներ և մեթոդաբանություն:

Մարգարյան Մ., Հայերենը որպես երկրորդ լեզու դասավանդելու խնդիրները: Մոցիալ-միջմշակութային մոտեցում և կրթական տեխնոլոգիաներ. միջառարկայական հայեցակետ
(հոդված /անգլերեն/)

Հոդվածն անդրադառնում է հայերենի դերին երկլեզու միջավայրում, ինչպես նաև քննվում, պարզաբանվում են հայերենը որպես երկրորդ լեզու դասավանդելու խնդիրները, միջոցներն ու մեթոդները: Նպատակը հայերենը որպես կիրառական լեզվաբանության հետազոտական օբյեկտ՝ երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու հիմնախնդիրը ներկայացնելն է:

Մարգարյան Մ., Լեզվաբանության տեսության հարցեր
(մենագրություն)

Ուսումնասիրությունը, ըստ էության, ընդլայնում է «Լեզվաբանության ներածություն» և «Լեզվաբանության հիմունքներ» դասընթացներում ընդգրկված հարցերի շրջանակը:

Աշխատության նպատակն է՝

- ներկայացնել՝
- լեզվաբանության տեսության առանցքային խնդիրները կանոնակարգելու և հստակեցնելու,
- լեզվաբանության տեսության և սկզբունքների առաջադրման և կիրառելու ուղիների,
- լեզվաբանական մեթոդների մշակման, զարգացման և կիրառման հարցերը.
- պարզաբանել լեզվաբանության արդիական խնդիրները,
- նախանշել լեզվաբանության տեսության խնդիրների առանձնահատկություններն ու լուծման ուղիները:

Աշխատության մեջ քննվում են լեզվաբանության տեսության համեմատաբար քիչ ուսումնասիրված խնդիրները, որոշ հարցեր մեկնաբանվում են նորովի, ամբողջանում է դրանց վերաբերյալ ձեկվորված պատկերացումը:

**Սարգսյան Մ., Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ
(մենագրություն)**

Ներկայացվում են հայալեզու և օտարալեզու սրբագրման համակարգերի առավելությունները և թերությունները, ինչպես նաև ուսումնասիրությամբ ստեղծված սրբագրման նոր համակարգը, որը գործում է համացանցային առանձին կայքում՝ `armspell.am` վեբ հասցեի ներքո: Այս համակարգի ստեղծումը կարող է նպաստել ինչպես լեզվաբանական հետազոտությունների բնագավառում համակարգչային տեխնիկա կիրառելուն, համակարգչային ծրագրերի միջոցով տեքստերում առկա լեզվական սխալները վերացնելուն, այնպես էլ լայն առումով հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառնությանը:

**Սարգսյան Մ., Հայերենի խմացության մակարդակների
առանձնացում ըստ միջազգային չափանիշների (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ երկլեզու և բազմալեզու միջավայրում լեզվի ուսուցման հարցը կիրառական լեզվաբանության կարևոր խնդիրներից է: Արտասահմանում կիրառական լեզվաբանության բնագավառի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է XX դ., Հայաստանում՝ XXI դ. սկզբին: Արտերկրում կիրառական լեզվաբանության բնագավառի սկզբնական ուսումնասիրությունները քննում էին լեզվի ուսուցման խնդիրները, Հայաստանում հակառակն էր. սկզբնական ուսումնասիրությունները վերաբերում էին լեզվի և տեխնոլոգիաների համատեղ կիրառմանը՝ աստիճանաբար անցնելով լեզու ուսուցանելու հարցերին: Արտերկրում

լեզվի ուսուցման հարցեր քննելիս ներառվում են առհասարակ բոլոր լեզուները, ցանկացած լեզու. այժմ Հայաստանում նույնպես կատարվում են նմանատիպ աշխատանքներ, բայց և դրանք առավելապես վերաբերում են անգլերենի ուսուցմանը՝ որպես օտար, երկրորդ լեզու ն: Հարկ է հավելել, որ հայերենն էլ այսօր լայնորեն ուսուցանվում է որպես օտար լեզու, սակայն չկա որևէ ուսումնասիրություն, որևէ ձեռնարկ, մեթոդական ուղեցույց, որը կներկայացնի հայերենը որպես երկրորդ լեզու ուսուցանելու խնդիրները և մեթոդները: Չկա նաև հայերենի իմացության մակարդակներն առանձնացնելու հստակ մշակված մեթոդաբանություն: Ըստ միջազգային ընդունված չափորոշի՝ առանձնացվում է լեզուների իմացության երեք ընդհանուր մակարդակ (A, B, C): Հայերենի իմացության մակարդակներ այս չափանիշներով չեն առանձնացվում: Եթե նույնիսկ պայմանականորեն առանձնացվեն, ապա փոքր-ինչ սխալ կլինի, քանի որ հայերենի քերականությունը տարբերվում է այլ լեզուներից, և անհրաժեշտ է մշակել հենց հայերենի քերականությանը, բառապաշարին համապատասխան չափանիշներ, հստակ որոշել, թե լեզվական իմացության ո՞ր մակարդակում ի՞նչ գիտելիք է անհրաժեշտ:

Սարգսյան Մ., Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանի մասին (հոդված/անգլերեն/)

Հոդվածում նշվում է, որ լեզուների ձևային նկարագրությունն ավելի ու ավելի կիրառական է դարձել, բայց և արձանագրվում, որ հայոց լեզվի լիարժեք ձևային նկարագրություն դեռ չի կատարվել: Թեև անհերքելի է, որ որոշակի փորձեր արվել են:

Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանը (<https://formlang.am/>) հայոց լեզվի լիարժեք ձևային նկարագրության առաջին փուլն է միայն: Հոդվածում ներկայացվում են հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանի առավելությունները:

Հազարավոր բառերի բառակազմական վերլուծությունն պարունակող էլեկտրոնային շտեմարանը հնարավորություն է ընձեռում որոնելու բառեր, ինչպես նաև դրանց ձևույթները: Մա նշանակում է, որ որևէ արմատ կամ ածանց փնտրելիս երևում են դրանցից կազմված բոլոր պարզ, բարդ, ածանցավոր և բարդաձանցավոր բառերը: Այն բացահայտում է ինչպես կանոնավոր կազմությունների, այնպես էլ տարբերակային բոլոր ձևերի, շեղումների ու անկանոնությունների ամբողջական պատկերը՝ հաճախականության, ինչպես նաև ավտոմատ վերլուծության ու սերման տվյալներով:

Տվյալների շտեմարանը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու հայերենի բառակազմությունը համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով, բացահայտելու նոր բառերի ստեղծման հիմնական օրինաչափությունները, պարզելու հայերեն բառերի կազմության սկզբունքները և ուղիները, ունենալու պարզ, ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր բառերի տարբերակված ամբողջական ցանկը:

Սարգսյան Մ., Էլեկտրոնային սրբագրիչի տվյալների շտեմարանի բառապաշարի ձևային նկարագրության խնդիրների մասին
(հոդված)

Սրբագրման ցանկացած համակարգ հաջող գործարկելու հիմքը ոչ միայն հմտորեն մշակված ծրագրաշարն է, այլև տվյալների հարուստ շտեմարանը: Բացի դրանից՝ սրբագրիչի տվյալների շտեմարանում ընդգրկվելիք բառապաշարը պետք է ձևային նկարագրության ենթարկել: Հոդվածագիրը նշում է, որ լեզվի ձևայնացումը բարդ և պատասխանատու աշխատանք է. ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ՝ առնչվող ոչ միայն ձևայնացման սկզբունքների մշակման ճշգրտությանը, այլև լեզվի կառուցվածքային տիպի, ձևաբանական փոփոխություններ կրող բառերի հոլովման և խոնարհման հարացույցների առանձնահատկություններին և այլն: Լեզվի ձևային նկարագրության սկզբունքները մշակելիս

պետք է հաշվի առնել տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները: Ձևայնացումը լիարժեք ապահովելու համար պակաս կարևոր չէ նաև նպատակը հստակ սահմանելը: Հաշվի առնելով ժամանակակից հայերենի ձևայնացման առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված դժվարությունները՝ հոդվածում քննվում են ձևային նկարագրության խնդրահարույց հարցերը, ներկայացվում դրանք լուծելու ուղիները, սկզբունքները, որոնք էլեկտրոնային սրբագրիչի տվյալների սույն շտեմարանի ստեղծման հիմքն են:

Սարգսյան Մ., Խաչիբաբյան Ն., *Կորոնա* բաղադրիչով նորակազմ բառերի քննություն (հոդված)

Վերջին երկու տարիներին աշխարհում տիրող COVID-19 համավարակը նոր բառեր ստեղծելու պատճառ կամ խթան է դարձել ոչ միայն հայերենում, այլև բոլոր լեզուներում: Կորոնավիրուսային համավարակին բնորոշ բազմաթիվ նոր բառեր և արտահայտություններ են թափանցել հայերենի խոսակցական բառաշերտ, նաև ի հայտ են եկել դիպվածային մեծաթիվ բառապատճենումներ և նորակազմություններ: Այսպես կոչված կորոնավիրուսային բառապաշարի որոշ նորակազմություններ արդեն իսկ տեղ են գտել աշխարհի հեղինակավոր բառարաններում և ամրագրվել տվյալ լեզվի հիմնական բառաֆոնդում:

Ուսումնասիրության նյութը կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ համացանցում կիրառվող նորակազմային բառերն են, որոնք կազմվել են *կորոնա* բաղադրիչով:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին հրապարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կատվալյան Վ.Լ., Բայազետի բարբառի բառարան, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 429 էջ:

Կատվալյան Վ.Լ., Խաչատրյան Հ.Ռ., Մկրտչյան Գ.Գ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Նյութեր.

Պրակ Ա, Գեղարքունիք, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 207 էջ:

Վարդանյան Ա.Վ., Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 124 էջ:

ԴԱՍԱԳՐՔԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Գևորգյան Գ.Գ., Արևելահայերենի գործածության նորմեր և շեղումներ, Ե., «Զանգակ» հրատ., 2021, 240 էջ:

Գևորգյան Գ.Գ., Վարդանյան Գ., Գործառական հայոց լեզու, Ե., «Զանգակ» հրատ., 2021, 248 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Բառնապյան Ջ.Ա., Լեզվամտածողության առանձնահատկությունների քննությունը ըստ Շիրակի մարզի գյուղերի խոսվածքների գրառումների, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 3-9:
2. Գևորգյան Գ.Գ., Ներկա>ապառնի ժամանակային անցումը հայերենում, «Հանդես ամսօրեայ», 1-12, Վիեննա, 2021, էջ 183-196:

3. Խաչատրյան Հ.Ռ., Իմաստափոխության իրողություններ Համ-
շենի բարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե.,
ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 38-48:
4. Խաչատրյան Հ.Ռ., Բառակազմական որոշ իրողություններ
Համշենի բարբառում, «Լեզու և խոսք», 1 (1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2021, էջ 29-43:
5. Խաչատրյան Հ.Ռ., *Լուսամուտ* և *պատշգամբ* հասկացություն-
ների բառանունները բարբառային հայերենում, Հայերենագի-
տական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ
ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 106-121:
6. Կատվալյան Վ.Լ., Բարբառային հատկանիշների խմբավորման
մի փորձ (ըստ տարածական ընդգրկման), «Ջահուկյանական
ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 49-59:
7. Կատվալյան Վ.Լ., Հայ բարբառների ուսումնասիրություն, ՀՀ
ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020,
Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-143:
8. Կատվալյան Վ.Լ., Ալիշանի դերը հայ միջնադարեան բանաս-
տեղծության բարբառային շերտի ուսումնասիրության մեջ,
«Բազմավեպ», թիվ 1-2, Վենետիկ-Ս. Ղազար, 2021, էջ 274-280:
9. Կատվալյան Վ.Լ., Գ.Սրվանձտյանցը և բարբառային հայերենը,
«Լեզու և խոսք», 1 (1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 43-54:
10. Կատվալյան Վ.Լ., Հարությունյան Վ.Լ., Տնտեսագիտական
տերմինաբանության զարգացման միտումների մասին, «Տնտե-
սագիտական նորոգություններ». գործարկման ուղիները Հա-
յաստանում (սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնա-
խընդիրները Հայաստանի Հանրապետությունում – հատոր 2),
Ե., ՀՀ ԳԱԱ ՏԻ հրատ., 2021, էջ 22-35:
11. Կատվալյան Վ.Լ., Հոգնակերտ մասնիկները բարբառային հա-
յերենում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 11, Ե.,
«Արտագերս» հրատ., 2021, էջ 281-297:

12. Մեսրոպյան Հ.Հ., Բուսանունները Հ. Ղևոնդ Ալիշանի «Այրարատ-Բնաշխարհի Հայաստանեայց» աշխատության մեջ, Բազմավեպ, 1-2, Վենետիկ-Ս. Ղազար, 2021, էջ 123-135:
13. Մեսրոպյան Հ.Հ., Հայերենը որպես միջնորդ լեզու և փոխըմբռնման միջոց համաշխարհայնացման արդի դարաշրջանում, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021, էջ 90-101:
14. Վարդանյան Ա.Վ., «Շուշի» տեղանվան ստուգաբանությունը, «Հանդես ամսօրեայ», 1-12, 2021, Վիեննա, էջ 479-484:
15. Վարդանյան Ա.Վ., Միջինհայերենյան իրողություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 100-107:
16. Վարդանյան Ա.Վ., Արցախի բարբառի «տնջրի» բուսանվան ստուգաբանությունը, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 144-150:
17. Варданян А.В., Этимология этнонима "зюк", «Լեզու և խոսք», 1 (1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 96-106:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Բառնաայան Ջ., Լեզվամտածողության առանձնահատկությունների քննությունը ըստ Շիրակի մարզի գյուղերի խոսվածքների գրառումների (հոդված)

Ներկայում մեծ ուշադրություն է դարձվում բարբառների բառապաշարի քննության հարցերին: Բառապաշարային իրողությունների դիտարկումով ի հայտ են բերվում իմաստային և կիրառական նրբերանգներ, որոնք հնարավորություն են տալիս համեմատական ուսումնասիրություններով կատարելու ուշագրավ եզրակացություններ: Հոդվածագիրը, քննության ոլորտում ունենա-

լով Շիրակի մարզի մի շարք համայնքների խոսվածքներ, նշում է, որ դիտարկվող տարածքում Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից եկել ու տեղաբնիկների կողքին բնակություն են հաստատել արևմտահայության՝ ցեղասպանությունից փրկված բեկորներ, որոնց սերունդները այս կամ այն չափով պահպանել են իրենց պապերի խոսվածքը: Հոդվածում հեղինակը փորձել է պարզաբանել բարբառախոս տվյալ տարածքին բնորոշ լեզվամտածողական առանձնահատկություններ՝ իբրև նյութ ունենալով տասնամյակներ առաջ Շիրակի մարզի մի շարք գյուղերում իր հետազոտական աշխատանքով ձեռք բերված տվյալները, ինչպես նաև մեր օրերում հավաքած նյութը: Նկատի ունենալով նաև անցյալ դարի 80-ական թթ. բարբառագիտական իր հավաքած նյութը՝ հոդվածագիրը փաստում է, որ դիտարկվող տարածքում գերակշռում է Կարնո բարբառը՝ հաղորդակցման հիմնական միջոց լինելով Գյումրիում և մի շարք գյուղերում: Շիրակի մարզի Գետք, Ագատան և Մարմաշեն գյուղերում տեղաբնիկներից բացի կան նաև 19-րդ դարասկզբին Կարսից և Էրզրումից գաղթածների սերունդներ: Շատ են նաև Մեծ եղեռնից մազապուրծ գերդաստանների 3-4-րդ սերնդի ներկայացուցիչները: Կան նաև հիմնականում գաղթականների սերունդներով բնակեցված գյուղեր: Ժամանակի ընթացքում շատ գյուղերում առաջացել են միջբարբառային խոսվածքներ: Վերջին տասնամյակի ընթացքում շարունակելով հետազոտությունները բարբառախոս միջավայրում՝ հոդվածագիրը նկատել է բնակչության քանակի նվազում, բարբառային խոսքում կատարված տեղաշարժեր: Հոդվածում ներկայացվել են բառիմաստային հետաքրքրական իրողություններ:

Գևորգյան Գ., Արևելահայերենի գործածության նորմեր և շեղումներ (ձեռնարկ)

Շեղինակը նշում է, որ լեզվի նորմերը լեզվական միջոցների ընտրության և պատմականորեն պայմանավորված ընդհանուր

գործածության կանոններն են, որոնք ընդունելի են տվյալ ժամանակաշրջանում: Լեզվական նորմը դրսևորվում է լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակներում, ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները: Հեղինակը փաստում է, որ լեզվական նորմերի իմացությունը ապահովում է գրական տարբերակի անթերի գործածություն, ճիշտ և գեղեցիկ բանավոր ու գրավոր խոսք, գրագետ հաղորդակցում: Գրական լեզվի նորմերից ամեն մի շեղում սովորաբար համարվում է սխալ և անընդունելի: Տեսագործնական ձեռնարկում հեղինակը ներկայացնում է արևելահայերեն գրական խոսքի գործածության նորմերը, անդրադառնում է տարածված շեղումներին: Ձեռնարկի ուղղագրական, կետադրական, քերականական առաջադրանքները գործնական աշխատանքով տեսական գիտելիքները յուրացնելու և ամրապնդելու համար են: Անշուշտ, լեզվական նորմերը պետք է յուրացնի տվյալ լեզուն կրող յուրաքանչյուր անհատ և ճշտորեն պահպանվի հաղորդակցության ընթացքում:

Գևորգյան Գ., Վարդանյան Գ., Գործառական հայոց լեզու
(ձեռնարկ)

Հեղինակները համարում են, որ անհրաժեշտ է կատարելագործել հայերենի ուսուցման ռազմավարությունը՝ փորձելով ուսուցման մեթոդները համապատասխանեցնել լեզուների դասավանդման արդի պահանջներին և ապահովել դրանց հաղորդակցական գործառույթը: Ձեռնարկում ներկայացվում են գործառական տարբեր ոճերի տեքստերի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները, բերվում են առաջադրանքներ, որոնք ունեն վերլուծական, մարզողական և կիրառական նշանակություն: Ձեռնարկի տեսական դրույթներն ու գործնական առաջադրանքները միտված են զարգացնելու պաշտոնական, հրապարակախոսական, տեղեկատվական, գեղարվեստական, գիտական բազմաբնույթ և բարդ տեքստեր վերլուծելու ունակությունները, ձևավորելու լեզվաոճական վերլուծություն կատարելու հմտու-

թյունները:

**Գևորգյան Գ., Ներկա > ապառնի ժամանակային անցումը
հայերենում (հոդված)**

Հոդվածագիրը անդրադառնում է հայերենի պատմական զարգացման ընթացքում բայի խոնարհման համակարգում տեղի ունեցած նշանակալից այնպիսի տեղաշարժերի, որոնք արդյունք են եղանակների ու ժամանակների քանակի, հարացուցային կազմությունների կառուցվածքի, բայի քերականական իմաստների դրսևորման միջոցների փոփոխությունների: Տիպաբանական տեսակետից հեղինակը կարևորում է ներկա>ապառնի ժամանակային անցումը: Քննվում են ներկայի ժամանակաձևերի կրած փոփոխությունները և դրանց՝ ապառնի ժամանակաձևերի իմաստներով կիրառությունները: Ներկայի և անցյալ անկատարի նորակազմ ձևերի առաջացմամբ, ըստ հեղինակի, չի լուծվել ներկա և ապառնի ժամանակաձևերի տարբերակման խնդիրը. *չու*-ով կազմությունները բազմիմաստ էին, և սահմանականի ներկան, անցյալ անկատարն ու ապառնին տարբերակված արտահայտածներ չունեին:

Հայերենի խոնարհման համակարգում կատարված ամենաբազմազան փոփոխությունը հոդվածագիրը համարում է ներկա>ապառնի ժամանակային անցումը, որը տեղի է ունեցել մի քանի անգամ: Նախ հինհայերենյան ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ ստորադասական եղանակների իմաստով հաճախացող գործածությունների հետևանքով դրանք սկսել են արտահայտել ըղձական եղանակաձևերի իմաստ, և կատարվել է ներկա>ապառնի ժամանակային առաջին անցումը: Այնուհետև, ինչպես վկայում են մատենագրական աղբյուրները, սկսել են գործածվել անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրությունները, որոնք գրաբարյան ներկայի նման ձեռք են բերել ապառնի իմաստ, այսինքն՝ կատարվել է ներկա>ապառնի ժամանակային հաջորդ անցումը:

**Խաչատրյան Հ., Իմաստափոխության իրողությունները
Համշենի բարբառում (հոդված)**

Հոդվածում քննվել են Համշենի բարբառի՝ բառիմաստային փոփոխությունների ենթարկված որոշ բառանուններ. առանձնացվել են *ղըռջան* հնչաձևով *ղրուժան*-ը, *փէտսնդ* հնչաձևով *փէթակ*-ը, *սանը* արմատի և *-իկ* ածանցի համադրությամբ ձևավորված *սոն-րիկ*, *սոնդոէկ*, *սոնդրիկ*, *սոնդրիկ*, *սոնդէրկ* բառանունները՝ որպես *հոպոպ* հասկացության նշանակելիներ, *պուլկ*, *պուլք* տարբերակներով վկայվող *բուլլ*-ը, *պուլկ* բառից և *-ոտ* (*ոտ>էդ*), *-ուտ* ածանցներից բաղադրված *պըլկէդ*՝ թփուտ, *պըլկուդ*՝ թփուտ բառանունները, հինհայերենյան *գերծանիլ* բառանունը՝ *գէյձնուշ*, *գէյզնուշ* հնչաձևերով, *կազմէլ*-ը՝ *զազնուշ* հնչաձևով և «հարսի շորերը հագցնել, որևէ բան զարդարել, ձին սարքել» նշանակություններով, *ածէլ* բայից ձևավորված *ածիլի*, *ածիլուշ*, *ածիլիճ* և այլ բառանուններ, *մարդ* բառանունը՝ *մաշտ* հնչաձևով, որից էլ ձևավորված *մաշնակ*-ը՝ «մարդավարի» իմաստով: Հոդվածագիրը նկատում է, որ Համշենի բարբառում *սիրտ* բառանունը բառիմաստային նրբիմաստներ է դրսևորում. *սիրտ* բառով բաղադրված *սէյդըռուշ* բայանունը ունի «խոռվել» նշանակությունը, կրոնափոխ համշենահայերի բառապաշարում արձանագրված են նաև *սէրդոդ*-ը՝ «զայրացած», *սէրդէռուշ*-ը և *սէյդէռուշ*-ը՝ «զայրանալ, վիրավորվել, խոռվել», իսկ *սիրդ*-ը՝ «զայրույթ» իմաստներով: Քննվում է նաև *մայր*՝ «մայրիկ» իմաստով բնիկ հայերեն արմատից բաղադրված ուշագրավ *մէյցու*, (*մսնյցու*, *մսնյծու*) բառանունը՝ որպես «մերան, մակարդ» հասկացության նշանակելի: Ըստ հոդվածագրի՝ բարբառում առկա *մսնյցու*-ն և *մէյցու*-ն *մէրան* բառի բառակազմական և հնչյունական այլ տարբերակներ են, որոնք էլ ծագումնաբանորեն առնչակից են *մայրիկ* իմաստով բնիկ հայերեն *մայր* արմատին:

**Խաչատրյան Հ., Բառակազմական որոշ իրողություններ
Համշենի բարբառում (հոդված)**

Հեղինակը հոդվածում անդրադառնում է Համշենի բարբառում կիրառվող արմատական մի քանի բառերի, որոնք սակավադեպ գործածություն ունեն գրական հայերենում, և այլ բարբառներում կամ էլ առկա են բարբառին բնորոշ յուրօրինակ հնչատարբերակներով: Դրանցից են *աք* (ոտք), *աղի* (փականք, օղակ, կահ-կարասիք, վաճառքի բեռներ, ամբոխ, ցեղ, զարմ) բառանունները (վերջինս՝ *աի* հնչատարբերակով՝ որպես «փակիչ, առանց բանալիի՝ սողնակ»-ի նշանակելի), գրաբարյան *անութ*, *անթ* («թևի տակի փոս» նշանակությամբ) արմատական բառը՝ *օնտ* հնչաձևով և որպես «գիրկ» հասկացության նշանակելի, *գէջ* հինհայերենյան բառանունը (*կէջ*, *կէչ* հնչաձևերով)՝ «խոնավ, թարմ և չչորացած» իմաստներով, բնիկ հայերեն *կիւ*-ը՝ *գիվ* հնչաձևով՝ որպես «մագտակ, ծամոն, ծամելու ձյութ»:

Ըստ հոդվածագրի՝ հին մատենագրության մեջ վկայված *այգ* բառանունը բարբառային հայերենում պահպանված չէ, սակայն բարբառներում արձանագրված են *այգ* առաջնային բաղադրիչով *էզլաց*, *այգողք*, *էգուց*, *էզվան* բառանունները: Համշենի բարբառը պահպանել է *այգ*-ը՝ *սկըն* հնչաձևով՝ «առավոտ» իմաստով, *այգ* արմատից ձևավորված *այգլաց* բաղադրյալ բառանվան *ակլաց*, *աքլաց*, *էքլաց* հնչաձևերը՝ «հոգու հաց» նշանակությամբ: Բարբառում առկա են նաև *ակն* արմատով բաղադրված ուշագրավ այլ բառանուններ:

Հոդվածագիրն անդրադարձել է գրաբարում չվկայված հընդերոտպական *լէպ* («լեզվի վրայի կեղտ, դիրտ» նշանակությամբ) բառանվանը, որը Համշենի բարբառում *լսւպ* հնչաձևով «ջրալի ցեխ» իմաստով է կիրառվում: Քննվել են նաև բարբառային հայերենում գործառող *դաի* (*տահ* հնչաձևով)՝ «հին, քարթու, օթեկ», և *գահ* (*քսի* հնչաձևով)՝ «դժվարանցանելի բլուր կամ բարձունք»

նշանակությամբ բառանունները, բնիկ հայերեն *ներ*-ը՝ «*տեղորկին*» նշանակությամբ: Դիտարկվել է հինհայերենյան *թասեմ պարզ* բայանունը, որը ճանիկում դրսևորված է *տաստուշ* հընչաձևով և ունի «հեալ, շունչը կտրվել» նշանակությունները: Հոդվածագիրը նշում է, որ Համշենի բարբառի նախածանցներից ամենակենսունակը *օն* հնչաձևով *ան*-ն է (*չուննօղ*՝ «չունեցող», *չիսխօս*՝ «քչախոս, չխոսկան», *չօննըվէր*՝ չուննոր):

Խաչատրյան Հ., Լուսամուտ և պատշգամբ բառանունները բարբառային հայերենում (հոդված)

Հոդվածագիրը քննել է *լուսամուտ* և *պատշգամբ* հասկացությունների՝ բարբառային հայերենում առկա բառանունները. *երդիկ*-ը՝ բառակազմական և հնչյունական բազմաթիվ տարբերակներով՝ *հոփթթ*, *հոփրդ*, *հէրթ*, *հըրթ*, *հ էրտիկ*, *հ էրտիս*, *էրթիս*, *հոփրտոփս*, *յէշտիք*, *արտէգ*, *պատտուհան*-ը՝ *բըդանհան*, *բանդիհուն*, *պըտօրհան* և այլ տարբերակներով: Փաստվում է, որ «լուսամուտ, լուսանցք» նշանակությամբ որոշ բարբառներում գործածվում են արաբերենից փոխառյալ *շըբակ*-ը և անհայտ ծագման *շմաթ*-ը: Կաքավաբերդի բարբառում «*հնձանի*, *գոմի*, *մարագի լուսամուտ*» նշանակությամբ հիշատակված է *տիրիճակ*-ը: Հոդվածագիրն արձանագրում է, որ «պատշգամբ» հասկացությունը բարբառային հայերենում սահմանափակ բառանուններով է դրսևորված. հիմնականում գործածվել են պարսկերենից փոխառյալ *շիշմբանդ* և ավելի ուշ ռուսերենից անցած *բալկօն* բառանունները: Բարբառային հայերենում որպես «*պատշգամբ*» հասկացության նշանակելի գործառում է նաև պարսկերենից փոխառյալ *այվան*-ը: Ըստ հոդվածագրի՝ հայերենի բարբառներում *այվան*-ը հանդես է գալիս և՛ որպես «թոնրատուն» հասկացության նշանակելի, և՛ «վերնատուն, վերնահարկ, ինչպես նաև հյուրասենյակ», և՛ «ունեցվածք, տուն-տեղ» և՛, իհարկե, խնդրո առարկա «պատշգամբ» նշանակությամբ:

**Կատվալյան Վ., Խաչատրյան Հ., Մկրտչյան Գ., Հայաստանի
Հանրապետության բարբառային համապատկեր. Նյութեր. Պրակ Ա.
Գեղարքունիք (մենագրություն)**

Գրքում ներկայացվում են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած դրամաշնորհով (թեմատիկ ֆինանսավորմամբ) 2013-2015 թթ. Գեղարքունիքի մարզում կատարված բարբառագիտական հետազոտությունների արդյունքները: Դիտարկումները կատարվել են համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով: Գրքի առաջին մասում քննվում են հիմնականում Բայազետի և Մշո բարբառների պատմական զարգացմանը, տարածագործառական ներկա իրողություններին վերաբերող հարցեր: Երկրորդ մասում դիտարկվում են մարզի խոսվածքներում բառերի իմաստային որոշ խմբերի տարածագործառական յուրահատկություններ, ներկայացվում են Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, ինչպես նաև երկբարբառների տարածական բնութագրերը: Աշխատության հավելվածն ընդգրկում է Գեղարքունիքի մարզի բնակավայրերի ցանկը՝ ամեն մեկում գործածվող լեզվատարբերակի նշումով:

Կատվալյան Վ., Բայազետի բարբառի բառարան

Բառարանն ընդգրկում է Բայազետի բարբառի շուրջ 8 000 բառային միավոր, դարձվածք և ոճ: Ամեն մի բառահոդված ներառում է գլխաբառը և բացատրությունը, քերականական տեղեկություններ, տվյալ բառով նախադասության օրինակներ, որոնք բարբառային խոսքի նմուշներ են, ասացվածքներ, դարձվածքներ, հաճախ էլ իրար հաջորդող բառերի համար բերված նմուշները բովանդակային կապ ունեն և պատումներ են ձևավորում: Բառարանը տեղեկություններ է պարունակում նաև բարբառակիր հանրության կենցաղի, առօրյայի, սովորույթների, պատկերացումներ-

րի, աշխարհընկալման վերաբերյալ: Բարբառային խոսքը ներկայանում է կենդանի գործածությամբ: Գլխաբառերը և նմուշները բերվում են բարբառային տառադարձությամբ:

**Կատվայյան Վ., Ալիշանի դերը հայ միջնադարյան
բանաստեղծության բարբառային շերտի ուսումնասիրության մեջ
(հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ հայ բարբառագիտության պատմության համար մեծ կարևորություն ունեն Ղ. Ալիշանի մի շարք դիտարկումներ, մեկնաբանություններ, հրապարակումներ: Ալիշանը նաև արձանագրել և սերունդներին է փոխանցել բարբառագիտական հետազոտությունների համար կարևոր նշանակություն ունեցող արժեքավոր նյութ: Հոդվածում քննվել են Ալիշանի՝ «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» հոդվածաշարում և «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում կատարած դիտարկումները, արժևորվել է ներկայացված բարբառային նյութը: 1847թ. «Բազմավեպ»-ի թիվ 6 համարում Ալիշանի հրապարակած «Ողբ Ջուղայեցվոց» երգը Ջուղայի բարբառով մեզ հասած ամենավաղ նմուշն է, իսկ «Բազմավեպի» 1843 թ. 21-րդ համարում Ալիշանի ներկայացրած երգը, ըստ Հ.Աճառյանի, Վանի բարբառի ամենավաղ արձանագրված նմուշն է: Ինչպես նշում է հոդվածագիրը, երկու նմուշներն էլ հարազատորեն են ներկայացնում Ջուղայի և Վանի բարբառներին բնորոշ հատկանիշները: Հոդվածներից մեկում Ալիշանն անդրադառնում է առածներին ու ասացվածքներին, նշում, որ ազգի մեջ գործածվող առակներն ու առակի պես կարճ խոսքերը պետք է համարվեն ազգի բարոյական համառոտ նկարագիրը, անհրաժեշտ է համարում, որ դրանք հավաքվեն ու տրվեն: Հայագետը մեջբերում է Հայաստանից ուղարկված առածներ, որոնց մեծ մասը ներկայացնում են Արարատյան բարբառը: Հոդվածագիրը փաստում է, որ Ալիշանը չի հակադրում ռամկորենը գրաբարին, չի մերժում նրա գոյության իրավունքը, այլ արժևորում է, փորձում է ճանաչել և գնահատել, իսկ ժամանակի համար նման

մոտեցումը արդարացի էր և խիստ առաջադիմական: 1852 թ. Վենետիկում հրատարակված «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում Ալիշանը ներկայացրել է Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարանների հայկական գրչագիր մատյաններում տարբեր ժամանակներում գրաված ժողովրդական երգերի մի փունջ՝ ընդգրկելով նաև Մշո և Արարատյան բարբառներով երգեր, որոնք նույնպես կարևոր նշանակություն ունեն բարբառային հայերենի զարգացումն ուսումնասիրելու առումով:

Կատվայյան Վ., Բարբառային հատկանիշների խմբավորման մի փորձ (ըստ տարածական ընդգրկման) (հոդված)

Աշխատանքում փորձ է արվել ի հայտ բերելու բարբառների լեզվական հատկանիշների տարածական բաշխման որոշ օրինաչափություններ: Դիտարկումները և վիճակագրությունը կատարվել են Գ. Ջահուկյանի ընտրած 100 հատկանիշների շրջանակում և ըստ լեզվաբանի կազմած աղյուսակների: Հոդվածագիրը նշում է, որ հատկանիշները խմբավորվել են ըստ տարածվածության և աշխարհագրական վերաբերության: Ընդհանուր են համարվել այն հատկանիշները, որոնց տարածվածության ցուցիչը 90 և ավելի միավոր է: Տարբերակվել են արևելյան և արևմտյան խմբակցություններին բնորոշ հատկանիշները՝ նկատի ունենալով խմբակցություններից մեկում դրսևորումների քանակի բացարձակ գերազանցությունը: Առանձնացվել են նաև առավելաբար արևմտյաններին կամ արևելյաններին հատուկ հատկանիշները՝ հաշվի առնելով դրսևորումների զգալի տարբերությունը: Երկու խմբակցություններում գրեթե հավասար տարածում ունեն հատկանիշների քանակական մոտավորապես նույն կարգի դրսևորումները: Դիտարկումները ցույց են տվել, որ բարբառային հայերենի սակավաթիվ հատկանիշներ ունեն լայն տարածում և ընդհանուր բնույթ. դրանք հիմնականում լեզվի պատմական զարգացմանն առնչվող հնչյունական իրողություններ են: Հատկանիշները դրսևորումների

զգալի տարբերություններ են հանդես բերում ըստ արևելյան և արևմտյան խմբակցությունների: Հարյուր հատկանիշների շրջանակում մոտ չորս տասնյակ հատկանիշներ բնորոշ են արևմտյան բարբառներին կամ առավելաբար տարածված են դրանցում, իսկ քսանհինգ հատկանիշներ վերաբերում են արևելյան բարբառներին: Երկու խմբակցությունները միմյանցից տարբերվում են ավելի շատ ձևաբանական (հատկապես՝ բայական), քան հնչյունական հատկանիշներով: Խմբակցություններից մեկին կամ մյուսին բնորոշ իրողությունները տարբերակիչ հատկանիշներ են, որոնք վկայում են բարբառախմբերում առկա ինքնուրույն զարգացումների մասին: Ըստ հոդվածագրի՝ մի խումբ հատկանիշներ գրեթե հավասար տարածում ունեն երկու բարբառախմբերում: Այդ կարգի հնչյունական հատկանիշները հայերենում արձանագրված պատմական զարգացումների կամ հնարավոր փոխազդեցական հնչյունափոխությունների դրսևորումներ են, նաև այլ լեզուների ազդեցությունների արդյունք, իսկ քերականական հատկանիշները հիմնականում հայերենի անվանական համակարգի հնարավորությունների պատմականորեն ձևավորված տարբերակների իրացումներ են:

Կատվայան Վ., Գ.Սրվանձտյանցը և բարբառային հայերենը (հոդված)

Հոդվածում նշվում է, որ Գ. Սրվանձտյանցը միայն բանահավաք, բանագետ ու ազգագրագետ չէր: Ունենալով ճկուն և վերլուծական միտք՝ նա իր հավաքած նյութը ներկայացրել է խորաթափանց մեկնաբանություններով, հետաքրքրական դիտողություններով՝ հընթացս հանդես բերելով լեզվին ու բարբառներին առնչվող մի շարք հարցերի ու իրողությունների խոր իմացություն, դրանց վերաբերյալ գիտականորեն ճիշտ պատկերացումներ: Հեղինակը հատկապես հիշատակելի է համարում բանագետի «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ», «Մանանայ», «Համով հոտով» գրքերը: Բանագիտական աշխատանքին զուգահեռ՝

Սրվանձտյանցը ընդգծել է Հայաստանի գավառներում գործածվող հայերենի տարբեր դրսևորումները գրառելու և պահպանելու, դրանք գրագետներին ծանոթ և սիրելի դարձնելու անհրաժեշտությունը: Նա մերժել է այն տեսակետը, որ բարբառները ցածրակարգ և աղավաղված լեզվական իրողություններ են: Սրվանձտյանցը անհրաժեշտ է համարել գրի առնել կամ նկարագրել տնական, գեղջկական, քաղաքական և կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, մանուկների խաղերը, որովհետև դրանք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունն են կազմում: Բանագետը իրավացիորեն նկատել է, որ հայ ժողովուրդը ավելի հին է, քան գրաբարը, ուրեմն՝ ժողովրդական լեզուն նախորդել է գրաբարին: Ըստ հողվածագրի՝ Սրվանձտյանցը մեծ հետաքրքրություն ներկայացնող տրամաբանական եզրահանգումներ է կատարել սեպագիր արձանագրությունների ընթերցանության և լեզվական բնութագրման վերաբերյալ: Հետաքրքրական է բանագետի՝ բարբառների առաջացման խնդրի մեկնաբանությունը. ըստ նրա՝ բարբառների գոյությունը բնական իրողություն է և պայմանավորված է մարդկանց տարբեր խմբերի բնակության վայրի, կենցաղավարության տարբերություններով, պատմական զարգացման հանգամանքներով: Լեզվի տարբերակվածության նույն հիմքերը Սրվանձտյանցը տեսնում է նաև իր ապրած օրերում՝ մատնանշելով լեզվական տարբերություններ ըստ կյանքի տարբեր բնագավառների: Հողվածագիրը նշում է, որ արդիական է բանագետի դիտարկումը բարբառային բառապաշարի հարստության վերաբերյալ. նա անհնարին է համարել, որ մեկը կարող լինի Հայաստանի բոլոր գավառների բնակիչների գործածած բառերը հավաքել, ուստի նոր բառեր կազմելուց բացի անհրաժեշտ է օգտագործել ժողովրդի ստեղծած ավելի «բնական բառերը»: Հողվածագիրը փաստում է, որ Սրվանձտյանցը խոսել է նաև բարբառային հայերենի հնչյունաքերականական մի շարք առանձնահատկությունների մասին, կատարել առանձին բարբառների վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ, ուշադրություն է

դարձրել այն հանգամանքին, որ հարևան բարբառները կարող են փոխադարձ ազդեցություններ ունենալ և նմանվել իրար: Կարևորվում է այն իրողությունը, որ Սրվանձտյանցը, որքան հնարավոր է, բարբառային խոսքին հարազատ է մնացել թե՛ էպոսի պատումը, թե՛ հեքիաթներ ու ժողովրդական այլ բառ ու բան գրառելիս: Այդ գրառումները, բարբառային բառերի բառարանների հետ, կարևոր նյութ են նաև բարբառների բառապաշարը, հնչյունաքերականական հատկանիշները և դրանց պատմական զարգացումը դիտարկելու առումով:

Կատվայան Վ., Հոգնակերտ մասնիկները բարբառային հայերենում (հոդված)

Բարբառային հայերենում գործածվում են լեզվի պատմական զարգացման նախորդ փուլերից (առավելաբար միջին հայերենից) անցած հոգնակերտ մասնիկներ, ինչպես նաև գրաբարում ու միջին հայերենում չվկայված կազմություններ: Բարբառից բարբառ հոգնակիի կազմությունը տարբերվում է հոգնակերտ մասնիկների քանակով, դրանց կազմության ու հնչյունական յուրահատկություններով, այլ իրողություններով: Հոդվածագիրը հիմնականում անդրադառնում է բարբառային հայերենում գործածվող հոգնակերտ մասնիկների կազմությանը և տարածական ընդգրկմանը: Բարբառային հոգնակերտները կազմությամբ պարզ են կամ բաղադրյալ, ընդ որում՝ վերջիններն ավելի շատ են: Բաղադրյալ հոգնակերտներն առավելաբար երկբաղադրիչ են և ավելի հաճախ կազմվում են *ք, էր, վի, տի, ան, նի* մասնիկներով: Հայերենի բարբառային բոլոր միավորներն էլ ունեն բաղադրյալ հոգնակերտներ, ընդ որում՝ այդպիսիք դրսևորվում են տարբեր զուգորդումներով ու հնչյունական ձևավորումներով: Հոգնակերտները տարբերվում են իրենց տարածվածությամբ: Գրեթե բոլոր բարբառներն ունեն *էր, ներ* հոգնակերտներ, տարածված են նաև *ք, նի* մասնիկները: Ըստ հոգնակերտ մասնիկների գործածության՝ ընդհանրություններ և տարբերություններ կարող են դիտվել ոչ միայն առանձին

բարբառների, այլև բարբառախմբերի միջև: Մասնավորապես, տարբերակվում են արևմտյան բարբառներին հատուկ հոգնակերտներ, արևելյաններին հատուկ հոգնակերտներ և երկու բարբառախմբերում գրեթե հավասար տարածում ունեցող մասնիկներ:

**Կատվայյան Վ., Հարությունյան Վ., Տնտեսագիտության
տերմինաբանության զարգացման միտումների մասին (հոդված)**

Տնտեսագիտության տերմինաբանությունը լայնածավալ է ու բազմաշերտ, շարունակ փոփոխվում է ու հարստանում: Հեղինակները դիտարկել են տնտեսագիտությանը վերաբերող տերմինաբանության յուրահատկությունները, նորակազմ տերմինների քննությամբ փորձել են երևան հանել ոլորտի զարգացման հիմնական միտումները, արձանագրել նորակազմությունների լեզվական առանձնահատկությունները: Տերմինային համակարգի առկա շերտերի հետազոտությամբ պարզաբանվել են նոր տերմինների ծագումնաբանական ու բառակազմական հատկանիշները, որոշվել դրանց առնչությունը տնտեսագիտության այս կամ այն ոլորտին և այլն: Հետազոտության նյութը քաղվել է տնտեսագիտական ու նորաբանությունների բառարաններից, զուգորդվել են տնտեսագիտական ու լեզվաբանական վերլուծությունների ու նկարագրության մեթոդները: Տնտեսագիտության նոր տերմինները ստեղծվում են գալիս հայոց լեզվի բառաստեղծման ավանդույթների և եղանակների համաձայն, նաև փոխառությունների և պատճենման միջոցով: Ըստ հեղինակների՝ տնտեսագիտության ոլորտում բառակապակցական միավորների փոխարեն ստեղծվում են համադրական բարդություններ, ածանցավոր կազմություններ: Փոխառյալ տնտեսագիտական տերմինները զգալի գործածականություն ունեն, մինչդեռ շատ դեպքերում դրանց համար առաջարկվել են հայերեն կազմություններ: Նշվում է, որ տնտեսագիտական տերմինագործածությունը աչքի է ընկնում որոշակի տարերայնությամբ, հաշվի չեն առնվում տերմինաշինության հա-

մար կարևոր պահանջները. տերմինային համակարգում հոմանիշ ձևերի առկայությունը մերժելի է. տերմինը պետք է ճշգրիտ և հասկանալի ներկայացնի հասկացությունը. տերմինները պետք է լինեն հնարավորինս կարճ, բարեհունչ, չխաթարեն լեզվի հնչյունական կազմը: Փոխառյալ տերմինները ըստ անհրաժեշտության կարող են գործածվել, բայց ոչ հայերեն հաջողված կազմությունների փոխարեն կամ առանց հաշվի առնելու հայերենի արտասանական օրինաչափություններին անհամապատասխանությունը և այլն:

Մեսրոպյան Հ., Բուսանունները Ղ.Ալիշանի «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» աշխատության մեջ (հոդված)

Հ. Ղևոնդ Ալիշանի գրական ժառանգության մեջ առանձնակի դեր ունեն տեղագրական հատորները՝ շարադրված «վսեմական գրոց լեզուաւ»: «Այրարատ» ընդարձակ աշխատության մեջ Ալիշանը ներկայացնում է *բույս* հասկացությանը վերաբերող բազմաթիվ տեղեկություններ, որոնք բնութագրում են բուսանունների տեղավայրը, տեսակային բաշխումը, արտաքին նկարագրությունը, բուժական հատկանիշները, նշանավոր հետազոտողների վկայությունները և այլն: Հոդվածագիրը վկայում է, որ բուսանուններն առկա են ամբողջ շարադրանքում, սակայն գերակշիռ մասն ամփոփված է գրքի հինգերորդ՝ «Բնութիւն երկրին. Կլիմայ. Բուսաբերութիւն» բաժնում: Լատիներեն համարժեքներով վկայաբերվող բուսանունները հինգ տարի անց տեղ են գտնում «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն» աշխատության մեջ, որում ի մի են բերվում հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսերի ու ծաղկատեսակների անվանումներ՝ համապատասխան դասակարգմամբ և գիտական բնութագրությամբ: Ըստ հոդվածագրի՝ Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատության բուսանունները, շարադրանքի պատմագիտական ոճով պայմանավորված, հիմնականում հանդես են գալիս որպես բուսաբանական գիտաբառեր, ո-

րոնք խոսքային այլ որակներում կարող են լինել նաև որպես սովորական բառեր: Ալիշանի վկայաբերած բուսանունը կիրառվում է ուղիղ իմաստով, իմաստափոխության, փոխաբերացման ենթարկված չէ, չունի խոսքի տարբեր դրսևորումներին բնորոշ ոճական հատկանիշներ և նշում է կոնկրետ բուսատեսակ: Հոդվածում «Այրարատ»-ի բուսանունները ներկայացվում են երկու հիմնական խմբով (համապատասխան ենթախմբերով). ա) կոնկրետ որոշակի բույս, նաև առնչակից հասկացություններ նշող անվանումներ, բ) բուսանուններով բաղադրված հատուկ անուններ: Որոշակի բուսատեսակ են նշում խոտաբույսերի, թփերի և ծառերի անվանումները: Ալիշանի աշխատությունը հիմնականում հարուստ է ծաղկանուններով և ծառանուններով, նաև սրանց հատկանվանացմամբ կերտված տեղանուններով, երբեմն նաև անձնանուններով: Հանդիպում են նաև բույս հասկացությանն առնչվող, բույսից ածանցյալ, բույսի արդյունք՝ «բար», «պտուղ», միայն բույսով պայմանավորվող իրողություն կամ գործողություն նշող բառեր: Լեզվական քննության հետաքրքիր նյութ են նաև «Այրարատ»-ում ընդգրկված բազմաթիվ ծառանուններ: Առանձին վերլուծության կարիք ունեն բուսանուններով բաղադրված հատկանունները: Հեղինակը նշում է, որ նման կազմություն ունեցող տեղանունները բավականին շատ են: Հայկական բնաշխարհի առանձնահատկություններով պայմանավորված՝ գերակշռում են լեռնանունները, նաև բլրակների ու ձորերի անվանումները: Վկայաբերված են նաև մի շարք ջրանուններ: Քիչ են բուսանուն բաղադրիչ ունեցող անձնանունները: Ալիշանը հայրենի բառակազմական օրենքների համաձայն կերտել է մի շարք նորակազմություններ (*տերևագարդութիւն, սոխաբոյս, քարաբոյս, սերմակորուստ* և այլն), որոնք դուրս են մնացել հայերենի բառային կազմն ընդգրկող նշանավոր բառարաններից:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ Ալիշանի «Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց» աշխատությունը բավականին հարուստ է բուսանուններով, որոնց գերակշիռ մասը գիտական ճշ-

գրություն է ստանում հեղինակի նշած լատիներեն եզրույթներով:

Մեսրոպյան Հ., Հայերենը որպես միջնորդ լեզու և փոխըմբռնման միջոց համաշխարհայնացման արդի դարաշրջանում (հոդված)

Հոդվածագիրը անդրադառնում է օտարներին հայերեն դասավանդելու խնդիրներին՝ նկատի ունենալով հայոց լեզվի միջոցով հայ ժողովրդի հոգեմտավոր արժեքները այլոց փոխանցելու իր փորձը երեք բուհում (ՀՊՃՀ, Թրակիայի և Նոր Զուդայի համալսարաններ): Նշվում է, որ ՀՀ կրթական համակարգը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես արևելյան երկրների դիմորդների համար (Հնդկաստան, Պարսկաստան, Լիբանան, Սիրիա, Իրաք և այլն): Միևնույն լսարանի ունկնդիր են դառնում տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որը որոշակի դժվարություններ է ստեղծում: Անհրաժեշտություն է առաջանում՝ հաշվի առնելու ուսանողների՝ ո՛ր երկրից և ի՛նչ նպատակով գալը, դավանանքի ու բարքերի առանձնահատկությունները: Թրակիայի համալսարանում հայերեն սովորել ցանկացող հույները, հրեաները, արաբները, քրդերը, ալևիները, մայրենիին չտիրապետող հայերը և իրենց թուրք համարողներն ունեն տարբեր դրդապատճառներ: Մասնավորապես, Թուրքիայում հայերի մի ստվար խումբ կա, որը քրդախոս, արաբախոս կամ թուրքախոս է, չգիտի կամ վատ գիտի հայերեն, քրիստոնյա կամ մահմեդական է, ունի ազգային պատկանելության զգացողություն և երբեմն՝ հայկական անվանահամակարգ: Նրանց հետաքրքրում է հայկական ամեն ինչ, ուզում են հասու լինել հայոց պատմությանն ու մշակույթին, սակայն չեն կարողանում հաղթահարել լեզվական պատնեշը: ԻԻՀ հետ օրըստօրե ընդլայնվող մշակութային, գիտակրթական, առևտրային, զբոսաշրջային, պետական-քաղաքական շփումները պատճառ են դառնում, որ հարևան երկրի համար հայերենը դառնա անհրաժեշտ: Նոր Զուդայի այլազգիների խումբը ամենօրյա շփման մեջ է պարսկահայ ուսանողության հետ, որը դարձնում է հայերենի դասա-

վանդման գործընթացը: Հողվածագիրը նշում է, որ հայերենը օտարներին հասու դարձնելու համար օրախնդիր է համապատասխան դասագրքերի ստեղծումը, ուսումնական ծրագրերի մշակումը, ուսուցման եղանակների արդիականացումը: ՀՊՃՀ-ում հայալեզու գրականությունը, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները խնդիր չեն հարուցում. կարևորը դրանց ճիշտ ընտրությունն է: Թրակիայի համալսարանում գրականության ընտրության պատկերն այլ է: Կան արևմտահայերենի կամ արևելահայերենի ընտրության, ինչպես նաև ուղղագրությանն առնչվող խնդիրներ: Նոր Ջուդայի համալսարանում ուսումնական հիմնական ձեռնարկը Սպահանի համալսարանի դասախոս Մոհամմադ Մալեք Մոհամմադի «Հայոց լեզվի քերականություն՝ պարսկերեն բացատրություններով» գիրքն է: Գործածվում են նաև ՀՀ-ի բուհական մի շարք դասագրքեր:

Հողվածագիրը ներկայացնում է հայերենի ուսուցման իր մեթոդները ըստ լեզվի տարբեր մակարդակների:

Վարդանյան Ա., Հյուսիսային Գողթնի միջբարբառը (մենագրություն)

Մենագրությունը Նախիջևանի տարածքի չուսումնասիրված բարբառային վերջին միավորների՝ պատմական Գողթն գավառի հյուսիսային գյուղերի խոսվածքների հետազոտություն է: Նախիջևանի տարածքը, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, ունեցել է բարբառային խիստ բազմազանություն: 1918-1920թթ. Իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության մեծամասնությունը հայեր էին, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Հեղինակի վկայությամբ՝ բնակչության գերակշիռ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի բարբառով (33 բնակավայր), ինչպես նաև Մարաղայի բարբառով (3 բնակավայր): Պահպանվել էին

նան տեղաբնիկ բարբառային միավորներ՝ Ագուլիսի (7 բնակավայր), Ջուղայի (1 բնակավայր), Արարատյան (4 բնակավայր), Արցախ-Սյունիքի բարբառները (6 բնակավայր), Ճահուկ-Վայքի միջբարբառը (2 բնակավայր), Հյուսիսային Գողթնի խոսվածքները (6 բնակավայր): Բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի-Խոյի), Որդուարի (Ագուլիսի-Մարաղայի-Խոյի): Հեղինակի ուսումնասիրության առարկան Նախիջևանի տարածքի միակ չուսումնասիրված բարբառային միավորն է՝ պատմական Գողթն գավառի հյուսիսային Ռամիս, Փառակա, Բիստ, Մեսրոպավան, Ողոհի (նախկինում՝ նաև Խուրստ) գյուղերի լեզվական բավական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքների խումբը, որը, ըստ հետազոտողի, առաջին իսկ հայացքից իր հատկանիշներով առանձնանում է շրջակա բարբառներից և լեզվական բավականին սերտ միասնություն է ներկայացնում: Հեղինակը ներկայացնում է քննվող խոսվածքների վերաբերյալ եղած դիտարկումները: Նպատակ ունենալով ճշտելու խոսվածքների ներքին և արտաքին առնչությունները՝ հեղինակն ուսումնասիրել է դրանց հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները՝ կիրառելով նաև Գևորգ Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը, և պարզել, որ հիշյալ խոսվածքները իրենց հատկանիշներով հանդես են բերում բավական սերտ մերձավորություն: Հատկանիշների տարբերությունների ցածր մակարդակը (ընդամենը 5,5-9,5 միավոր) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի այս հինգ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ: Հեղինակը նաև ստուգաբանել է ուսումնասիրվող տարածքի տեղանունները, զետեղել իր կազմած՝ խոսվածքների բառացանկերն ու գրառված բանահյուսական նմուշները, ինչպես նաև տարածքի բարբառագիտական քարտեզը և նյութը լուսաբանող աղյուսակներ ու գրաֆներ:

**Վարդանյան Ա., Միջինհայերենյան իրողություններ Ճահուկ –
Վայքի միջբարբառում (հոդված)**

Հեղինակի ուսումնասիրության նյութը Ճահուկ-Վայքի միջբարբառի միջինհայերենյան իրողություններն են՝ հաշվի առնելով, որ այս միջբարբառն ընդգրկող բնակավայրերը (Հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր) պատմականորեն լեզվական առումով համախմբվել են միջինհայերենյան շրջանում (10-17-րդ դդ.)՝ նախ Սյունիքի և Անիի թագավորությունների, ապա Օրբելյանների և Խաղբակյանների (Պռոշյանների) իշխանապետությունների տարածքում և առավել հարազատորեն են պահպանել միջինհայերենյան մի շարք հատկանիշներ: Հեղինակն անդրադառնում է միջբարբառում առկա *Ֆ* հնչյունին առնչվող հետաքրքրական մի հանգամանքի: Նշվում են նաև միջինհայերենյան շրջանից միջբարբառում պահպանված հետաքրքիր ձևաբանական որոշ հատկանիշներ: Ներկայացվում են միջբարբառի բառապաշարում առկա՝ հարևան ժողովուրդների լեզուներից միջինհայերենյան շրջանում փոխառված բազմաթիվ բառեր և այլն:

**Վարդանեան Ա., «Շուշի» տեղանունան ստուգաբանությունը
(հոդված)**

Հոդվածում հեղինակը նշում է, որ հայկական տեղանունների թուրքականացման ամենատարածված ձևերից մեկը տեղանունների այնպիսի միտումնավոր խեղաթյուրումն է, որը, անկախ նրա արտահայտած իմաստից, ինչ-որ նշանակություն է ունենում թուրքերենում կամ աղբբեջաներենում, և, խեղաթյուրողների կարծիքով, «ապահովում է» տվյալ տեղանվան «թյուրքական ծագում» ունենալու տպավորությունը: Հայոց պատմական տեղանունները օտարելու և յուրացնելու շատ ակնհայտ ձգտում և փորձ ունեն և՛ թուրքերը, և՛ մանավանդ աղբբեջանցիները: Նշվում է, որ կեղծարարների համար աղավաղված տեղանվան որևէ տրամաբանա-

կան բովանդակություն ունենալը բոլորովին պարտադիր չէ. օրինակ, Նախիջևանի *Շահապոնք* կամ *Շահապոնս* բերդավանը, որը հազարամյակներ շարունակ Շահապոնի տոհմի ամրոցն է եղել, դարձրել են *Շահբուզ* (պարսկերեն՝ *շահ* «թագավոր» և թուրքերեն *բուզ* «սառույց») բառերից, բառացիորեն ստացվում է իմաստագուրկ և անհեթեթ մի բան՝ «թագավորի սառույց»), *Տավուշը* դարձրել են *Թովուզ* (կապելով քրդերեն *թավուս* «սիրամարգ» բառի հետ): Այս նույն եղանակով, ի դեպ, Արցախի պարսկերեն պատմական անվանումներից մեկը՝ *Առան-ի պաղը* կամ *Առան-է բաղը* («այգի Առան», «անտառային Առան») դարձրել են *Ղարաբաղ* («սև այգի»): Համանման ճակատագրի արժանացած հայկական բազմաթիվ այլ աշխարհագրական անունների շարքում հեղինակը նշում է նաև *Շուշի* տեղանունը՝ համարելով, որ հայոց պատմության ու մշակույթի նշանավոր կենտրոն Շուշի բերդաքաղաքի անվան ստուգաբանության թերևս ամենաարժանահավատ տարբերակը տեղանունը Արցախի բարբառի *շոշ* («ծառի ընձյուղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի բարբառներում դրսևորվում է նաև *շուշ* («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ») և *շիշ* («ծառի կատար») ձևերով: Նշվում է նաև, որ վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած Շուշին շարունակել է կրել բերդի անունը՝ սեռական հոլովի ձևը որպես ուղղական ընդունվելով: Ի դեպ, տեղանունների սեռական հոլովը և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ հայերենի բարբառների մեծ մասում կազմվում է առավելապես *ա* հոլովիչով (Երևան-*Երևանա*, Գարդման-*Գարդմանա* և այլն), ուստի պետք է կարծել, որ Շուշին ունեցած պետք է լինի նաև *Շուշա* սեռականաձև տարբերակը, որի վկայությունն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական *Շուշվա* ձևը: Սեռականի այս ձևից էլ հեղինակը բխեցնում է աղբյուրների «դուր եկած» *Շուշա* տարբերակը, որը նրանք նմանեցնում են պարսկերենից փոխառյալ՝ աղբյուրներեն *šüšə* («ապակի») բառին: Սակայն այս «վարկածի» հեղինակները «մոռանում են», որ պարսկերեն *šüšə* բառից փոխառյալ աղբյուրներեն *šüšə* բառի երկու ձայնավորներն էլ քմային են, իսկ քաղաքի՝ իրենց նախընտրած *Šuša* անվանման

ձայնավորներից ոչ մեկը քմային չէ: Հեղինակի ամփոփմամբ՝ ստացվում է, որ, օրինակ, թուրքերն էլ նույն «տրամաբանությամբ» կարող են *Վանա բերդ* ձևը թուրքերեն համարել, իսկ *Վանի բերդ* տարբերակը՝ հայերեն:

**Վարդանյան Ա., Արցախի բարբառի «տնջրի» բուսանվան
ստուգաբանությունը (հոդված)**

Հոդվածը վերաբերում է հայերենի *սոսի* (*սոս(ի)/սաս(ի)*) բուսանվան հոմանիշներից մեկի ստուգաբանությանը: Վաղնջական ժամանակներից հայոց հավատալիքներում սրբացված այս ծառի անունը հայերենի բարբառներում հիմնականում կիրառվում է փոխառյալ *չինար* ձևով (պարսկերեն՝ *čenar*, թուրքերեն՝ *çinar*, ադրբեջաներեն՝ *çinar*), բացառություն է Սվեդիայի բարբառի *սուսա* ձևը: Հոդվածագիրը, ներկայացնելով Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Հ. Մարտիրոսյանի, Հ. Հմայակյանի՝ *ճանդար(ի)* ծառանվանը, դրա *տընջրի* տարբերակի ծագմանն առնչվող դիտարկումները, եզրակացնում է, որ հայերեն բարբառային *տընջրի* ծառանունը կարող էր առաջանալ նաև հայերեն *տաճար* բառի սեռական հոլովից՝ *ն-ի* հավելմամբ, միջձայնավորային խուլի ձայնեղացմամբ (*ճ > ջ*), անշեշտ վանկերում *ա > ը* հնչյունափոխություններով՝ տաճարի > տաջարի > տանջարի > *տընջրի*, և ունենալ «տաճարի ծառ» նշանակությունը:

**Վարդանյան, Ա., «Զոկ» ցեղանվան ստուգաբանությունը (հոդված,
հրապարակվել է ռուսերեն)**

Ագուլիսի բարբառը կամ զոկերենը ընդգրկում էր պատմական Գողթն գավառի հարավային մասի բնակավայրերը՝ Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Տանակերտ, Յոնա, Քաղաքիկ, Դիսար, Հանդամեջ գյուղերը: Բարբառի վերջին մի քանի տասնյակ կրողները 1989 թ. բնագաղթի ենթարկվեցին բար-

բառը կրող արդեն միակ բնակավայրը դարձած Յդնա գյուղից: Հեղինակը նախ ներկայացնում է *զոկ* ցեղանվան ծագման և ստուգաբանության վերաբերյալ ուսումնասիրողների (Մ. Աբեղյան, Լեո, Ա. Ղարիբյան, Ք. Պատկանյան, Ս. Սարգսյանց, Ա. Այվազյան, Ս. Ումառյան) կարծիքները: Վարկածներից մեկի կապակցությամբ հոդվածագիրը նկատում է, որ *զոկ* անվանումը իրականում ոչ թե այլոց կողմից Ագուլիսի բարբառը կրողներին տրված մականուն է եղել (ինչպես *ախպարը* կամ *հոսհոսը*՝ արևմտահայերին), այլ ցեղանուն, որով առաջին հերթին հենց իրենք՝ բարբառը կրողներն են ինքնանվանվել:

Հիմք ընդունելով հատկապես պատմահայր Մովսես Խորենացու վկայությունն ու Մ. Աբեղյանի կարծիքը, ուսումնասիրելով բարբառի ընձեռած նյութը, իրանական լեզուների հետ ակնհայտ հնագույն առնչությունները, հեղինակը առավել հավանական վարկած է համարում զոկերի ցեղանվան (ինքնանվանման)՝ Աժդահակ-Ջոհակի անունից բխելու վարկածը՝ նշելով, որ սա, անշուշտ, ընդամենը խոսում է հինավուրց հայկական այս ցեղում որոշակի մարական շերտի ներթափանցման պատմական հիշողության մասին:

Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2021 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայոց լեզվի պատմության հարցեր, IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 293 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Ս.Ս., Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության 2002-2020 թվականներին հրատարակված ուսումնասիրությունների մատենագիտական վերլուծություն, (ամփոփ նկարագրություն), «Լեզու և լեզվաբանություն», հ. 2 (25), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 102-107:
2. Գրիգորյան Ս.Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների իմաստային քննություն, «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 6-100:
3. Գրիգորյան Ս.Ս., Բարգէն եպս. Կիլիկիեցու «Իսլամը հայ մատենագիտության մէջ» աշխատությունը և Գրիգոր Տաթևացու «Ընդդէմ տաճկացւոյ», «Հանդէս ամսօրեայ», 1-12, Վիեննա, 2021, էջ 1-70:
4. Գրիգորյան Ս.Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք Քարոզութեան» Ամառան և Ձմեռան հատորների բառապաշարի ձևաիմաստային խմբերն իբրև ինքնատիպ լեզվամտածողության արտահայտություն, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 28-45:
5. Թադևոսյան Հ.Ս., «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» երկի բառապաշարի ընդհանուր բնութագիրը, Հայերենագիտա-

- կան առցանց գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 89-106:
6. Թադևոսյան Հ.Մ., Միջին հայերենին բնորոշ բառիմաստային նոր դրսևորումները «Գիրք վաստակոց» երկում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 100-147:
 7. Թորոսյան Հ.Վ., *Շուն* բաղադրիչով դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 18-27:
 8. Թորոսյան Հ.Վ., Հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները (պարսկախոս լսարանի օրինակով), «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» առցանց միջազգային համաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Տիր» հրատ., 2021, էջ 51-58:
 9. Հովհաննիսյան Լ.Շ., Վաստակաշատ գիտնականն ու ազնիվ քաղաքացին (Սեդա Գասպարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (217), Ե., «Գիտություն» հրատ., 2021, էջ 300-307:
 10. Հովհաննիսյան Լ. Շ., Բազայառիճ տեղանվան շուրջ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 84-88:
 11. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանությունները, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 79-83:
 12. Հովհաննիսյան Ն.Գ., Դարձվածային միավորներ նույնանիշների՝ XVIII դ. ձեռագիր բառարաններում, «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողովի (Երևան, 8-9 հուլիսի) նյութեր/ ՀՀ լեզվի կոմիտե; ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա: Խմբ. խորհուրդ՝ Ս. Գրիգորյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ, Ե., Copy Print LLC հրատ., 2021, Պրակ Բ, էջ 75-85:

13. Հովհաննիսյան Ն.Գ., Նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարանների կառուցվածքային առանձնահատկությունները, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 55-75:
14. Հովհաննիսյան Ն.Գ., Մխիթարյան Գ.Մ., Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, մաս II, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 144-161:
15. Mkhitarian G.M., A Cognitive Approach to the Study of Musical Terms, Proceedings of the Scholarly Abstracts, NXIX, p. 29, Publisher: "EASR", SciPub.de <https://ojs.scipub.de/index.php/EASR/issue/view/20/27>
16. Mkhitarian G.M., The Cognitive Feature of Musical Terms, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-95:
17. Միրունյան Տ.Ղ., Քոնայի միարարական կենտրոնում ստեղծված երկրների բառապաշարը. նորաբանություններ և օտարաբանություններ (ԺԴ. դ.), «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 199-291:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների իմաստային քննություն (հոդված)

Հոդվածում ներկայացվում է «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների ամբողջական ցանկը: Նկատի ունենալով, որ Տաթևացին դրանք վկայում է պատմական հարուստ տեղեկությունների համատեքստում, ցանկի քննությունը մի կողմից՝ ձեռք է բերում աղբյուրագիտական արժեք, մյուս կողմից՝ կարող է դիտվել իբրև անձնանունների բառարան:

**Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» «Ձմեռան»
և «Ամառան» հատորների բառապաշարի ձևախմաստային խմբերն
իբրև ինքնատիպ լեզվամատածողության արտահայտություն
(հոդված)**

Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» «Ձմեռան» և «Ամառան» հատորներն աչքի են ընկնում հոմանիշ, հականիշ և համանուն բառերի առատ կիրառությամբ: Այդ տեսանկյունից էլ քարոզգրքերի լեզուն հարուստ է, ճոխ և ինքնատիպ: Հրապարակախոսական, հոետորական խոսքին բնորոշ ոճական հնարքների հրմուտ գործածությունը ընդհանրապես հատուկ է Տաթևացու երկերին: Մեծ աստվածաբանի երկերում՝ բառերի ձևախմաստային խմբերում, առանձնացված օրինակների գերակշիռ մասը հոմանիշներ ու հականիշներ են. անհամեմատ սակավաթիվ են համանունները: Այս տեսանկյունից բացառություն չեն նաև «Գիրք քարոզութեան» «Ձմեռան» և «Ամառան» հատորները: Եթե նկատի առնվի Տաթևացու երկերի հիմնականում մեկնողական բնույթը, բնական է հատկապես հոմանիշների մեծաթիվ առկայությունը:

Տարբեր աշխատություններում Տաթևացին սահմանում է նաև հականիշությունը՝ հականիշներով նշանակվող երևույթները բնութագրելով իբրև «ներհակ» կամ «հակառակ»: Նկատում է նաև, որ հականիշներով «նշանակվում են հակադիր բնեռում գտնվող երևույթները»:

**Գրիգորյան Ս., Բաբգեն եպս. Կիլիկիեանի «Իսլամը հայ
մատենագրութեան մեջ» աշխատութիւնը և Գրիգոր Տաթևացու
«Ընդդէմ տաճկաց»-ը (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են տեղեկություններ և տվյալներ՝ Բաբգեն եպս. Կիլիկիեանի աշխատության մեջ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի «Ընդդէմ տաճկաց» գլուխը հրատարակելու, հրատարակությունը ընդհատվելու և այդ գլուխը հրատարակությունից դուրս մնալու մասին: Նշվում է, որ եթե դեպքերի բե-

րումով չլինեին Բաբգեն եպս. Կիլիկիեանի հետաքրքրությունը և հետազոտական աշխատանքի մեծ նվիրումը, հնարավոր է՝ մինչ օրս ուսումնասիրողները չունենային «Գիրք հարցմանց»-ի լիակատար տարբերակը:

Թադևոսյան Հ., Միջին հայերենին բնորոշ բառիմաստային նոր դրսևորումներ «Գիրք վաստակոց» երկում (հոգված)

Հոդվածագիրը ներկայացնում է XIII դ. հայ թարգմանական գրականության կարևոր նմուշում՝ «Գիրք վաստակոց» երկում, առկա իմաստային նոր դրսևորումները: Նրա հավաստմամբ՝ իմաստային նոր դրսևորումները, որոնց մեծ մասն առաջին անգամ կամ եզակի վկայությամբ է հանդիպում երկում, հիմնականում վերաբերում են առօյա կյանքին:

Նոր բառիմաստները, ըստ ստեղծվելու ուղիների, ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ՝ խոսքիմասային տեղաշարժերով պայմանավորված նոր բառիմաստներ, որոնք հիմնականում ձևավորվել են հատկանշային իմաստի մեջ առարկայական նշանակություն կամ առարկայական նշանակության մեջ հատկանշային իմաստ զարգանալու ճանապարհով, և իմաստափոխություններ՝ բառիմաստի ընդլայնմամբ ու բառիմաստի նեղացմամբ:

Իմաստային նոր դրսևորումների զգալի մասը, ըստ հեղինակի, կիրառվել է միջին հայերենում. միայն տասնվեցը, գործուն լինելով միջին հայերենում և բարբառներում, պահպանվել և ամրագրվել են ժամանակակից հայոց լեզվում:

Աշխատանքի վերջում հավելվածով տրվում է բառացանկ, որն ընդգրկում է նոր բառիմաստներ (հիմնականում բառիմաստի ընդլայնմամբ առաջացած եզակի դրսևորումներ): Հեղինակը նկատում է, որ «Միջին հայերենի բառարան»-ում չարձանագրված նոր իմաստները հետազայում չեն կիրառվել:

**Թադևոսյան Հ., «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկի
բառապաշարի ընդհանուր բնութագիրը (հոդված)**

XIII դ. Կիլիկյան Հայաստանում ձիաբուծության և ձիաբուծության հարցերին վերաբերող երկի բառապաշարի ընդհանուր բնութագիրը ներկայացնելիս հոդվածագիրը նշում է, որ այն արժեքավոր սկզբնաղբյուր է նաև միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից:

Ըստ հոդվածագրի՝ նշված երկում արձանագրվում են նախորդ դարերում ստեղծված բժշկարաններում (Հերացի, Աբուսայիդ), ինչպես նաև «Գիրք վաստակոց»-ում չվկայված նոր բառեր, այդ թվում՝ նաև եզակի կիրառություններ: Նոր բառերի մի խումբ բժշկական տերմինի արժեք ունի՝ ախտանուններ, դեղանուններ, բուսանուններ, ձիանուններ, ձիերին առնչվող և կազմախոսական բառեր: Դրանք փոխառություններ, նորակազմություններ են, ժողովրդախոսակցական, բարբառային, անստույգ ծագում ունեցող բառեր և բառիմաստի նոր դրսևորումներ են:

Բժշկական տերմինի արժեք ունեցող փոխառությունները, հեղինակի հավաստմամբ, հիմնականում արաբերեն և պարսկերեն բառեր են. գործածվել են ֆրանսերեն և թուրքերեն բառեր: Հատկանշական են հատկապես օտար բառերի հայերեն համարժեքները, որոնք ստեղծվել են հայերենի բառակազմական միջոցներով: Հեղինակը դիտարկում է նաև բժշկարանում կիրառված նոր բառիմաստներ: Նշվում է, որ քննվող առօրյա-խոսակցական բառերը կիրառվել են բժշկական տերմինի նշանակությամբ:

Հեղինակը նկատում է նաև, որ դիտարկվող բառերը հիմնականում նորակազմ են և պահպանվել, ամրագրվել են արդի հայերենի բառարաններում:

**Թորոսյան Հ., ՇուՆ Բաղադրիչով դարձվածային միավորների
խմաստակառուցվածքային առանձնահատկություններն արդի
հայերենում և պարսկերենում (հոդված)**

Հայերենի և պարսկերենի՝ կենդանիների անուններով ձևավորված դարձվածային միավորների մեջ առանձնանում են շուՆ բաղադրիչով կազմվածները, որոնք արտահայտում են թե՛ անձի հատկանիշ, թե՛ վերացական հասկացություն: Հոդվածի նպատակը արդի հայերենի և պարսկերենի՝ շուՆ բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային յուրահատկությունները բացահայտելն է՝ նկարագրական, զուգադրական և համեմատական մեթոդներով: Զուգադրվող լեզուների դարձվածաբանական տարբեր բառարաններից քաղվել և ներկայացվում են շուՆ բաղադրիչով կազմված անվանական և հաղորդակցական կապակցությունները, դրանց ձևավորման կաղապարները, դարձվածային համարժեքներն ու համապատասխանությունները:

Նշվում է, որ շուՆ բաղադրիչով կազմված դարձվածային միավորները երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ են: Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, բազմաբաղադրիչ կառույցների մեծ մասը mesl-e «նման» կապով ձևավորված համեմատություն է: Կան նաև դարձվածային միավորներ, որոնք և՛ հայերենում, և՛ պարսկերենում պարզ ընդարձակ նախադասության արժեք ունեն: Դրանց բնորոշ են նախադասության հատկանիշներ՝ ստորոգում, հնչերանգային ավարտվածություն, երանգավորում:

Դարձվածքային համապատասխանությունների և դարձվածք-համարժեքների առկայությունը վկայում է հայերի և իրանցիների լեզվամտածողության նմանությունների, տարբերությունների և յուրահատկությունների մասին:

**Թորոսյան Հ., Հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման
առանձնահատկությունները (պարսկախոս լսարանի օրինակով)
(հոդված)**

Հոդվածում ներկայացվում են հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները՝ լեզուների ուսուցման ավանդական և հաղորդակցական մոտեցումների տեսանկյունից: Այս մեթոդները, լրացնելով միմյանց, ավելի են դյուրացնում օտար լեզվի ընկալումն ու տիրապետումը:

Պարսկախոս լսարանին հայերեն ուսուցանելու ընթացքում ուշադրության են արժանանում հետևյալ իրողությունները.

- իրանական լեզուներից մեծաթիվ փոխառությունների առկայությունը հայերենում,
- հայերենի և պարսկերենի ձևաբանական, շարահյուսական մակարդակների և ընդհանրապես լեզվամտածողության նմանությունները, ընդհանրություններն ու տարբերությունները:

**Խաչատրյան Վ., Հայերեն ձեռագրերի՝ XIII դ. հիշատակարանների
բառապաշարը (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ բոլոր դարերի (այդ թվում և XIII դ.) հիշատակարանները, պայմանավորված հիշատակագրության դարավոր ավանդույթով, մեծ մասամբ գրաբար են: Ի տարբերություն այլ բնագրերի՝ հիշատակարանները ներկայացնում են մարդկային զգացումների, ապրումների, կենցաղային-ընտանեկան հարաբերությունների մանրամասներ, ուստի և անխուսափելի է ոչ միայն կենդանի խոսքին հատուկ անմիջականությունը, այլև համապատասխան բառաշերտի առկայությունը:

Հիշատակագիրները սովորաբար օրհնանքի և մեծարանքի խոսքեր են ուղղել ձեռագիրն ընդօրինակողներին և առհասարակ նրանց, ովքեր որևէ դեր են ունեցել այն փրկելիս, պահպանելիս, գրչագրելիս և փոխանցելիս՝ դա համարելով մեծագույն ծառայություն հայրենիքին, ժողովրդին և հավատքին: Այնինչ իրենց մասին

հիշատակելիս գործածել են պարսավանքի, մեղադրանքի արտահայտություններ՝ մեծ մասամբ նկատի առնելով ընդօրինակված ձեռագրերում թույլ տրված վրիպումները, գրի խոշոր լինելը և զանազան այլ հանգամանքներ, հայցելով Աստծու ողորմությունն ու օրհնությունը և խնդրելով, որ ընթերցողները աղոթքներում հիշեն նաև իրենց: Ահա այսպիսի հանգամանքներում լայնորեն գործավել են համապատասխան բովանդակության բառեր. հեղինակն անդրադառնում է դրանց և այդ բառերի ոճական կիրառություններին:

Հոդվածում առանձնացվում են նաև մի շարք բարբառային բառեր, որոնք ըստ ծագման բաժանվում են երեք խմբի՝ բնիկհայերենյան, անհայտ ծագման և օտարամուտ բառեր: Բացի բուն բարբառային բառերից՝ հիշատակարաններում կիրառվել են նաև գրաբարի հնչյունական և բառակազմական օրինաչափություններից շեղվող բազում բառատարբերակներ: Այդ բառերը դասակարգվում են ըստ հնչյունափոխական և բառակազմական առանձնահատկությունների: Առանձնացվում են նաև բառարաններում չարձանագրված բառերը: Ուսումնասիրության արդյունքներով՝ XIII դ. հիշատակարաններում գործածված շուրջ 600 բառ և բառատարբերակ չեն վկայվել Նոր հայկազյան բառարանում: Նըշված բառերի մի մասն արձանագրվել է այլ բառարաններում: Ըստ բառարանների տվյալների՝ շուրջ 400 բառ և բառատարբերակ չեն վկայվում որևէ բառարանում: Նկատվում է, որ շատ բառեր հիշատակարաններում ոչ թե եզակի, այլ բազմակի գործածություն ունեն. ենթադրվում է, որ դրանք մեծ մասամբ կազմվել են հիշատակագրության ընթացքում:

Քննվում և իմաստային խմբերով դասակարգվում են օտար ծագման այն բառերը, որոնց օտար լինելը գիտակցվում է հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերում: Որոշ բառերի դեպքում կատարվում են բառակազմական ուշագրավ վերլուծություններ:

**Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական
հնաբանությունները (հոդված)**

Հոդվածում հետազոտվում են Ղարաբաղի բարբառի բայական համակարգում առկա հնաբանությունները: Նշվում է, որ բարբառների բայաձևերի բազմազանությունը, ինչպես նաև բարբառային հին գրավոր աղբյուրների բացակայությունը խոչընդոտում են հնաբանություններն առանձնացնելուն: Սակայն նկատի ունենալով բարբառի և գրաբարի բայաձևերի ընդհանրություններն ու տարբերությունները՝ հոդվածագիրը Ղարաբաղի բարբառի հնաբանությունները ներկայացնում է երեք խմբով.

ա) Հնդեվրոպական արմատներով կազմված բայեր, որոնք վկայված չեն գրաբարում:

բ) Անցյալ կատարյալի հիմքով կազմված ձևեր, որոնք մի դեպքում՝ նման են գրաբարին իրենց արմատական կամ ցոյական կազմությամբ, մյուս դեպքում՝ տարբերվում են. գրաբարում ունեն անցոյական, իսկ բարբառում՝ ցոյական հիմք:

գ) Անկանոն կամ զարտուղի խոնարհման բայեր, որոնք իրենց խոնարհման այս կամ այն ձևերով ևս հնաբանություն են:

Գրաբարում չվկայված շուրջ երեք տասնյակ բարբառային բայերը, ինչպես նաև անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերն ու անկանոն խոնարհումը նկատի ունենալով՝ հեղինակը եզրակացնում է, որ բարբառի բայական համակարգը ձևավորվել է նախագրային շրջանից:

Հովհաննիսյան Լ., Բազայառիճ տեղանվան շուրջ (հոդված)

Բազայառիճ տեղանունը առաջին անգամ վկայել է V դ. պատմիչ Ագաթանգեղոսը: Ըստ հոդվածագրի՝ Խորենացու Պատմության մեջ *Բազայառիճ*-ը եզակի վկայությամբ հստակ ներկայանում է որպես գյուղանուն: Անդրադառնալով բառի՝ հայ լեզվաբանների (Գր.Ղափանցյան, Հ.Աճառյան, Գ.Զահուկյան) տարբեր ստուգաբանությունների՝ հանգում է այն եզրակացության, որ *Բա-*

գայառիճ-ը, ինչպես և վկայում է Ագաթանգեղոսը, իրոք պարթևներեն բառ է, սակայն կասկածելի է համարում վերջինիս բնակավայր լինելու հանգամանքը, մանավանդ որ V և հետագա դարերի մատենագրության մեջ նման բնակավայր վկայված չէ: Հողվածագիրը Ագաթանգեղոսի վկայած համատեքստում նկատում է գրաբարին բնորոշ շարահյուսական անկանոնություն և կարծիք հայտնում, որ *Բագայառիճ*-ը ոչ թե գյուղի, այլ գյուղում գտնվող մեհյանի անվանումն է:

Հովհաննիսյան Ն., Դարձվածային միավորներ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններում (հոդված)

Հողվածում նշվում է, որ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով՝ XVIII դարից ավանդված հինգ ձեռագրերում ամփոփված նույնանիշ բառերի ձեռագիր բառարանների բառաշարքը քննելիս նկատելի է մի երևույթ, որը հոմանիշային շարքերի կազմության առանձնահատկություն է համարվում ժամանակակից հայերենում: Խոսքը վերաբերում է հոմանիշային շարքերը «ինչպես բառերով, այնպես էլ դարձվածներով առանձին-առանձին և խառն՝ հոմանիշ բառերով և դարձվածներով միասին» կազմելուն:

Ձեռագիր բառարանների քննությունից պարզորոշ է դառնում, որ դրանցում որոշակիորեն առանձնացող դարձվածային միավորները քաղվել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից. հայ մատենագրության գիտակ բառարանագիրները կամ գրիչները դրանք ձեռագիր բառարանների մեջ են ներառել՝ հավանորեն պայմանավորված նաև բառարանի գործնական բնույթով:

Հողվածում առանձնացվում են ձեռագիր բառարաններում առկա այն դարձվածային միավորները, որոնք վկայվում են Աստվածաշնչում, այլ աղբյուրներում, XVIII դարում և XVIII դարից հետո հրատարակված բառարաններում: Քննվում են գրաբարի տը-

պագիր բառարաններում չարձանագրված հետևյալ դարձվածային միավորները՝ *կշտաբեկ/կաշտաբեկ լինել, ի սուսերի սատակել, սուգ զգենուլ, ննջել ի տէր, լեզուն ի քիմսն կցել, մարդ ելուզանել*:

**Հովհաննիսյան Ն., Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված
ձեռագիր բառարանների կառուցվածքային
առանձնահատկությունները (հոդված)**

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակները վկայում են XVIII դարից ավանդված՝ նույնանիշների ձեռագիր բառարաններ ամփոփող հինգ ձեռագրեր, որոնց խորագրերում առկա են «նոյնանշան», «նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր», «նոյնանշանք» բառեր ձևակերպումները:

Հստ հոդվածագրի՝ կարելի է հավանական համարել, որ *նոյնանշան* եզրը տարբերակվում է հենց XVIII դարում՝ ճշտելով՝ «նոյնանշան բառ»-ն առաջինը կիրառել է Մխ. Սեբաստացին՝ ոչ միայն *փաղանունը* բացատրելիս նշելով՝ «...ըստ քերականաց փաղանուն կոչին փաղանշան անուանք, այսինքն այնքիկ, որք զանազան ձայնիւ զնոյն նշանակեն, յորմէ և կոչին նոյնանշանք...», այլև «յաշխարհաբառէ ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» բառգրքի խորագրում (այն հրատարակվել է Մխ. Սեբաստացու մահվանից հետո՝ 1769 թ.):

Քննությամբ պարզվում է, որ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանները բառերի այբբենական դասավորությամբ են սկսվում են *Ազահ, Ազանիլ* հենաբառերով, և նոր խմբագրության են: Նախորդ դարերից ավանդված՝ բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ձեռագիր բառարանների համեմատությամբ ունեն նոր բառաշարքեր. արձանագրված-պահպանվածներն էլ հիմնականում նոր հենաբառերով են. կան մի քանիսով ներկայացվող բառաշարքեր: Այս ձեռագիր բառարաններն առանձնանում են այնպիսի բառաշարքերով, որոնք ընդգրկում են հասկացությունը տեսակային տարբերակմամբ:

